

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ N6

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2015

«Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի» գիտական հետազոտական լաբորատորիան սկսել է իր գործունեությունը 2010թ.-ից ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կազմում: Լաբորատորիան իրականացնում է ՀՀ գիտության և տեխնոլոգիաների զարգացման խնդիրների ուսումնասիրություն, ոլորտի մոնիթորինգ և վիճակագրական տեղեկատվության վերլուծություն:

Միջազգային մրցույթների գիտական և տեխնիկական փորձաքննություն. հայ-ռուսական և հայ-բելառուսական դրամաշնորհներ

Միրզոյան Ա., Գոդյան Է., Հովհաննիսյան Լ., Ալեքսանյան Ս., Մեհրաբյան Մ.,
Հունանյան Ս., Մախլյան Ա., Սարգսյան Շ.

Ամփոփագիր

Տեղեկագրում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի, Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից կազմակերպված հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ գիտական մրցույթները: Հետազոտությունն իրականացվել է 6 երկկողմ համատեղ մրցույթների (4 հայ-ռուսական և 2 հայ-բելառուսական) հայտերի ուսումնասիրության, ինչպես նաև RINC, AINC և WOS շտեմարանների տվյալների հիման վրա: Ուսումնասիրվել և համեմատվել են հաղթած և չհաղթած խմբերի գիտաչափական ցուցիչները, տարիքները, գիտական աստիճանները: Կարևորվել է համատեղ մրցույթների ազդեցությունը հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական համագործակցության վրա:

Հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթած խմբերի գիտաչափական ցուցիչները ոչ միշտ են բարձր չհաղթած մասնակիցների նույնանման ցուցանիշներից, իսկ հայ-բելառուսական մրցույթներում հաղթող խմբերի գիտաչափական ցուցանիշներն ամբողջությամբ համընկնում են մրցույթների արդյունքների հետ:

Abstract

The bulletin presents and analyses Armenian-Russian and Armenian-Belarusian bilateral grant projects organized jointly by the State Committee of Sciences of the Ministry of Education and Science of the Republic of Armenia and the Russian National Foundation for Humanities and the Russian Foundation for Basic Research under the Government of the Russian Federation and the Belarusian Republican Foundation for Fundamental Research. 6 bilateral grant projects are being studied (4 with the Russian funds and 2 with the Belarusian Fund) based on their applications and databases of WOS, RINC and AINC. Scientometric indicators, ages, as well as scientific degrees of the participants were analyzed and compared among the winning and non-winning groups. The influence of the bilateral grants on the overall Armenian-Russian and Armenian-Belarusian scientific cooperation was also highlighted.

In conclusion - in the Armenian-Russian joint projects bibliometric indicators of the non-winning groups in some cases prevail over the winners' group, while in the Armenian-Belarusian joint projects bibliometric indicators always correlate with the results of the peer review.

Резюме

В бюллетене анализируются двухсторонние конкурсы, проводимые Государственным комитетом по науке Министерства образования и науки Республики Армения с Российским фондом фундаментальных исследований, Российским гуманитарным научным фондом и Белорусским республиканским фондом фундаментальных исследований. Работа осуществлена на основе исследования заявок 6 двухсторонних совместных конкурсов (4 армяно-российских и 2 армяно-белорусских), а также на основе баз данных RINC, AINC и WOS. Наукометрические показатели, возраст, а также учёные степени участников конкурсов были проанализированы и сравнены среди групп победителей и других участников. Также отмечено влияние двухсторонних конкурсов на армяно-российское и армяно-белорусское научное сотрудничество.

Было также выявлено, что библиометрические показатели группы остальных участников армяно-российских совместных конкурсов в некоторых случаях превалируют над аналогичными показателями группы победителей, в то время, как в случае с армяно-белорусскими совместными конкурсами данные показатели всегда коррелируются с результатами научной экспертизы.

Բովանդակություն

Միջազգային մրցույթների գիտատեխնիկական փորձաքննություն. հայ-ռուսական և հայ-բելառուսական դրամաշնորհներ	7
Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ	9
ՀՀԲՀՀ-ի կառուցվածքը	12
Մրցութային նախագծերի գիտական փորձաքննության կարգը	14
Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև գիտատեխնիկական համագործակցությունը	16
Մասնակիցներին ներկայացվող պահանջները	19
Հայ-բելառուսական համատեղ մրցույթների փորձաքննությունը	21
Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	24
ՀՀՌՀ-ի կառուցվածքը	24
Միջազգային համագործակցություն	25
ՀՀՌՀ-ի կողմից անցկացվող մրցույթներ	26
Մրցույթի անցկացման կարգը	29
ՀՀՌՀ-ում գիտական ձորձաքննության անցկացման կարգը	30
Գիտական փորձաքննության իրականացման կարգ	31
Գիտական փորձաքննության սկզբունքները	35
ՀՀՌՀ-ի փորձագետները.....	35
Փորձագիտական խորհուրդներ	36
ՀՀՌՀ-ի հետ համատեղ իրականացվող մրցույթներ.....	38
Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամ	42
ՌՀԳՀ-ի կառուցվածքը	42

ՌՀԳՀ-ի մրցույթները	44
ՌՀԳՀ-ի փորձագետները	45
Փորձագիտական խորհուրդներ	45
Գիտական փորձաքննության անցկացման կարգը ՌՀԳՀ-ում	46
ՌՀԳՀ-ի տեղեկատվական համակարգ	63
ՌՀԳՀ-ի համագործակցությունը ԳՊԿ-ի հետ	64
Հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական կապերի ուսումնասիրությունը համատեղ պետական դրամաշնորհների շրջանակներում	68
Օգտագործված տվյալների բազաների վերաբերյալ հակիրճ ակնարկ	68
Նյութերն ու մեթոդները	69
Արդյունքները և քննարկումները	72
Հայ-ռուսական և հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթներում հաղթած և չհաջրած մասնակիցների գիտաչափական տվյալների վերլուծություն	80
Համատեղ հրապարակումները որպես գիտական համագործակցության արդյունք	87
Վերջաբան	99
Օգտագործված աղբյուրների ցանկ	101

Միջազգային մրցույթների գիտատեխնիկական փորձաքննություն. հայ-ռուսական և հայ-բելառուսական դրամաշնորհներ

Միջազգային գիտական համագործակցության կարևոր մաս են համատեղ իրականացվող գիտական մրցույթները, որոնց արդյունքում ընտրված նախագծերը յուրահատուկ «կամուրջ» են մասնակից երկրների գիտական համայնքների միջև: Դրանց արդյունքում տարբեր երկրների գիտնականների միջև ամրապնդվում են գոյություն ունեցող գիտական կապերը կամ ստեղծվում են նորերը: Համատեղ մրցույթները թույլ են տալիս տարբեր երկրների գիտնականներին համակարգված աշխատել գիտության արդի խնդիրների լուծման ուղղությամբ՝ ստեղծելով նոր գիտելիք և սեփական լուծման ներդնել միջազգային գիտության զարգացման մեջ:

Համատեղ մրցույթների իրականացման հարցում մեծ է տարբեր գիտական հիմնադրամների դերը: Ներկայումս գիտական հիմնադրամները գիտական համակարգի կարևոր մաս են, որոնց հիմնական նպատակն է դրամաշնորհների միջոցով աջակցել գիտական հետազոտությունների իրականացմանը: Հիմնականում այդ օժանդակության հասցեատերերն են գիտնականների և հետազոտողների ոչ մեծ խմբերը: ԽՍՀՄ-ում 1980-ականների վերջին նման հիմնադրամի ստեղծման գաղափարը քննարկվում էր ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությունում: Սակայն Խորհրդային Միությունում առաջին գիտական հիմնադրամը ստեղծվեց հանրապետական մակարդակում. 1991 թ. մայիսին Խորհրդային Բելառուսի կառավարության որոշմամբ ստեղծվեց Հիմնարար հետազոտությունների հիմնադրամը:

Ռուսաստանում նմանատիպ հիմնադրամ ստեղծվեց արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո: 1992թ. ապրիլին հիմնվեց Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամը, որը պետք է օժանդակեր գիտության բոլոր ուղղություններով տարվող հետազոտությունների իրականացմանը՝ ներառյալ հումանիտար և հասարակագիտական: Նման հիմնադրամի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր ՌԴ Գիտության, բարձրագույն դպրոցի և տեխնիկական քաղաքականության նախարարությանը: Սակայն

Ժամանակի ընթացքում ի հայտ եկան բարդություններ հումանիտար և հասարակական գիտությունների ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններում:

Արդյունքում, 1994թ. սեպտեմբերին ստեծվեց Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամը: Նորաստեղծ հիմնադրամը գրեթե ամբողջությամբ ընդօրինակեց Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի ղեկավարման կառուցվածքը և փորձաքննության համակարգը:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ հիմնադրամներ դեռևս գոյություն չունեն: Դրանց գործառույթն այժմ իրականացնում է Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեն:

Գիտական հիմնադրամների հաջողության հիմքում ընկած է մի քանի հանգամանք.

1. Հասցեագրված ֆինանսավորում: Դրամաշնորհները տրամադրվում են անմիջապես հետազոտություն իրականացնող գիտնականներին, այլ ոչ թե գիտական կազմակերպություններին:
2. Նախաձեռնողականություն: Հայտը ներկայացնող գիտնականն ինքն է որոշում հետազոտության թեման և հետազոտությունն իրականացնողների կազմը, աշխատանքային պլանը, կազմակերպությունը, որի միջոցով իրականացվելու է ֆինանսավորումը և այլն:
3. Միջգերատեսչականություն: Սովորաբար հիմնադրամները որևէ գիտական կազմակերպությունից կամ կառավարական մարմնից միակողմանի կախվածության մեջ չեն գտնվում:
4. Ինքնակառավարում: Հիմնադրամների բարձրագույն ղեկավար մարմին են խորհուրդները, որոնք սովորաբար կազմված են լինում առաջատար գիտնականներից և որոշում են հիմնադրամի գործունեությունը:

Հիմնադրամները և այլ կազմակերպություններն անցկացնում են գիտական մրցույթներ, որոնց առանցքային մասը գիտական փորձաքննությունն է: Ներկայացված հայտերի ընտրությունը և դրանց ֆինանսավորման ծավալները որոշվում է գիտական փորձաքննության եզրակացության հիման վրա:

Սույն տեղեկագիրը ներկայացնում է հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների գիտական փորձաքննության կազմակերպումը, մրցույթների գիտաչափական վերլուծությունը, ինչպես նաև՝ տեղեկություններ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի մասին:

Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ

Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամը¹ (բելառուսերեն՝ Беларускі рэспубліканскі фонд фундаментальных даследаванняў), հիմնվել է Բելառուսի ԽՍՀ մինիստրների խորհրդի 1991 թ. մայիսի 8-ի թիվ 176 որոշման համաձայն: Այն նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի տարածքում ամենահին պետական գիտական հիմնադրամն է: Սկզբում այն անվանվում էր Հիմնարար հետազոտությունների հիմնադրամ, սակայն 1996թ. ապրիլի 3-ին ընդունված կառավարության մեկ այլ որոշման համաձայն (համար 236, «Բելառուսի Հանրապետության Հիմնարար հետազոտությունների հիմնադրամը Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի վերակազմման մասին») վերանվանվել է և հաստատվել է նոր կանոնադրությունը: Հիմնադրամի ստեղծման նպատակն է եղել մեծացնել գիտության բնական, տեխնիկական և հումանիտար ոլորտներում հիմնարար և որոնողական հետազոտությունների ֆինանսավորումը, ինչի շահառուներ կարող են հանդիսանալ գիտական կազմակերպությունները, բուհերը, ինչպես նաև Բելառուսի անհատ հետազոտողները:

Բելառուսի Հանրապետության նախագահի «Գիտության ոլորտում

¹ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ անվանումը այսուհետև ՀՀԲՀՀ:

պետական կառավարման բարելավման մասին» ղեկըտոմ (2002 թ. մարտի 5) ՀՀԲՀՀ-ն իրավաբանական անձի կարգավիճակով մտել է Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի կազմի մեջ: Մինչ այդ հիմնադրամը ենթարկվում էր Բելառուսի Հանրապետության մինիստրների խորհրդին:

ՀՀԲՀՀ-ի ստեղծման գլխավոր նպատակն էր լրացնել գիտության օժանդակության ավանդական՝ բազային ֆինանսավորման ձևերը նոր՝ մրցութային ֆինանսավորմամբ, որն իրականացվելու էր գիտության արդիական ուղղություններով: Փաստորեն, ի տարբերություն բազային ֆինանսավորման, որն ապահովում է գիտական կազմակերպությունների աշխատանքը, մրցութային ֆինանսավորումը նախատեսված էր գիտնականների խմբերի համար:

ՀՀԲՀՀ-ի կանոնադրությամբ ամրագրված հիմնական գործառույթներից են.

- գերակա ուղղություններով հիմնարար և որոնողական հետազոտությունների կարճաժամկետ նախագծերի ֆինանսավորում,
- տաղանդավոր երիտասարդ գիտնականների օժանդակություն,
- արտասահմանյան գիտնականների հետ համատեղ գիտական նախագծերի ֆինանսավորում (այս կետի հիման վրա էլ ծավալվում է, մասնավորապես, ՀՀԲՀՀ-ի համագործակցությունը ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի² հետ),
- գիտական հետազոտությունների գիտատեխնիկական բազայի օժանդակություն,
- մենագրությունների և հիմնարար հետազոտությունների վերաբերյալ այլ հրապարակումների տպագրության ֆինանսավորում,
- Բելառուսում հիմնարար և որոնողական հետազոտությունների վերաբերյալ միջոցառումների կազմակերպման և անցկացման աջակցություն,
- բելառուս գիտնականների՝ արտերկրում հիմնարար և որոնողական հետազոտությունների վերաբերյալ

² ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի անվանումը այսուհետև՝ ԳՊԿ:

միջոցառումներին մասնակցությանը օժանդակություն:

ՀՀԲՀՀ ֆինանսավորում է հետևյալ ուղղություններով իրականացվող գիտական հետազոտությունները.

1. ֆիզիկա, մաթեմատիկա և ինֆորմատիկա,
2. տեխնիկական գիտություններ,
3. քիմիա և գիտություններ Երկրի մասին,
4. բժշկական և դեղագործական գիտություններ,
5. գյուղատնտեսական և կենսաբանական գիտություններ,
6. հումանիտար գիտություններ:

Ֆինանսավորվող նախագծերն ընտրվում են մրցույթների արդյունքում: Նախագծերն անցնում են անկախ փորձագիտական քննություն, որն իրականացվում է փորձագետների և փորձագիտական խորհրդների կողմից: Վերջիններիս անդամ են գիտության տվյալ ոլորտներում առավել հայտնի գիտնականները: Հայտերի դիտարկման գործընթացը գաղտնի է և դրա վերաբերյալ տեղեկությունները չեն տրամադրվում մրցույթի մասնակիցներին կամ երրորդ անձանց: Նախագծեր ներկայացրած գիտնականները մրցույթի արդյունքների մասին տեղակացվում են մրցույթի ավարտից մեկ ամիս անց: Օժանդակություն ստացած նախագծերի ցուցակները հրապարակվում են «Հիմնարար հետազոտությունների հիմնադրամի տեղեկագիր» (Вестник фонда фундаментальных исследований) պարբերականում և ՀՀԲՀՀ կայքէջում: Մրցույթին մասնակցելու համար չկան տարիքային (բացառությամբ երիտասարդ գիտնականների նպատակային մրցույթների, որտեղ վերին շեմը սահմանված է 35 տարեկանը), գիտական կոչման, գիտական աստիճանի, զբաղեցրած պաշտոնի կամ հայտատուի աշխատավայր հանդիսացող գիտական կազմակերպության գերատեսչական պատկանելիության սահմանափակումներ: Միաժամանակ, Հիմնադրամի խորհրդի, ինչպես նաև Հիմնադրամի գործունեությունը վերահսկող դիտորդական խորհրդի անդամները սովորաբար չեն կարող հանդես գալ որպես նախագծի ղեկավար:

ՀՀԲՀՀ-ի կողմից տրամադրվող միջոցների 20 տոկոսն ուղղված է վերադիր ծախսերի վրա, իսկ մնացած միջոցները ծառայում են բուն հետազոտության իրականացմանը:

Ավարտված աշխատանքների անոտացիաները հրապարակվում են

հիմնադրամի տարեգրքում՝ «Հիմնարար և որոնողական հետազոտությունների հիմնական արդյունքները և առաջարկներ դրանց օգտագործման հեռանկարների վերաբերյալ» (Основные результаты фундаментальных и поисковых исследований и предложения по перспективам их использования):

ՀՀԲՀՀ-ի կառուցվածքը

Հիմնադրամի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը *Գիտական խորհուրդն* է, որի անդամներն են հիմնարար գիտության ոլորտի առաջատար գիտնականները (Գիտական խորհուրդն ունի 36 անդամ): Գիտական խորհուրդն ապահովում է ՀՀԲՀՀ-ի կանոնադրությամբ սահմանված նպատակների և գործունեության իրականացումը, որոշում է հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն ու մեթոդները, հայտարարում է մրցույթներ, հաստատում է դրանց անցկացման ժամկետներն ու պայմանները, հայտերի ներկայացման, փորձաքննության ու մրցութային կարգը, ամփոփում է անցկացված մրցույթների արդյունքները, որոշում է հաղթած նախագծերի ֆինանսավորման ծավալները և այլն: Գիտական խորհրդի կազմը հաստատվում է Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից հինգ տարի ժամկետով: Գիտական խորհրդի անդամներից կազմվում են բաժանմունքներ՝ ըստ գիտություն ուղղությունների: Գիտական խորհրդի անդամներն աշխատում են հասարակական հիմունքներով:

Ընթացիկ հարցերի լուծմամբ զբաղվում է *Գիտական խորհրդի բյուրոն*, որի կազմի մեջ են մտնում Գիտական խորհրդի նախագահը, տեղակալը, Գիտական խորհրդի բաժանմունքների նախագահները և գործադիր վարչության փոխսնօրենը:

Համաձայն հիմնադրամի կանոնադրային նպատակների և հիմնական խնդիրների՝ *Հոգաբարձուների խորհրդն* իրականացնում է վերահսկողական գործառույթներ Գիտական խորհրդի և Գործադիր վարչության նկատմամբ և հետևում է ՀՀԲՀՀ-ի միջոցների և այլ ունեցվածքի նպատակային օգտագործմանը: Հոգաբարձուների խորհրդի կազմը (բաղկացած է 12 անդամից) նույնպես հաստատվում է Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից հինգ

տարի ժամկետով և գործում է հասարակական հիմունքներով:

Հիմնադրամի *Գործադիր վարչությունը* կյանքի է կոչում Գիտական խորհրդի և *Բյուրոյի* որոշումները, մշակում է բաց մրցույթների անցկացման պայմանները, հայտերի ներկայացման, փորձաքննության անցկացման ու մրցութային ընտրության կարգը, ընտրված նախագծերի ֆինանսավորման և իրականացման կարգը, կազմակերպում է մրցույթները, հայտերի ընդունումը, Գիտական խորհրդի բաժանմունքների և ՀՀԲՀՀ-ի փորձագիտական խորհրդների հետ համատեղ կազմակերպում է նախագծերի և հայտերի պարտադիր անկախ փորձաքննությունը, նախապատրաստում է դրանց ֆինանսավորման առաջարկները, ինչպես նաև Գիտական խորհրդի բաժանմունքների և ՀՀԲՀՀ-ի փորձագիտական խորհրդների հետ համատեղ կազմակերպում է հիմնադրամի միջոցներով իրականացվող հետազոտությունների հաշվետվությունների փորձաքննությունը:

Մրցույթին ներկայացվող հայտերի փորձաքննությունն իրականացվում է փորձագիտական 16 խորհրդներում, որոնց կազմը հաստատվում է ՀՀԲՀՀ-ի Գիտական խորհրդի կողմից: Այդ խորհուրդներն են.

- միջուկային, ատոմային և մոլեկուլյար երևույթների ֆիզիկա,
- կոնդենսավորված վիճակների ֆիզիկա,
- մաթեմատիկա,
- ինֆորմատիկա,
- մեքենաշինություն,
- էներգետիկա,
- ռադիոէլեկտրոնիկա և սարքաշինություն,
- նյութաբանություն,
- ֆիզիկական, կոլոիդային և անօրգանական քիմիա,
- օրգանական, կենսաօրգանական քիմիա և կենսաքիմիա,
- գիտություններ Երկրի մասին,
- կենսաբանություն,
- բժշկություն,
- ագրարային գիտություններ,
- բանասիրական գիտություններ և մշակութաբանություն,
- փիլիսոփայական և տնտեսական գիտություններ:

ՀՀԲՀՀ-ի կազմում գործում են հետևյալ բաժանմունքները.

- ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի,
- տեխնիկական գիտությունների,
- քիմիայի և Երկրի մասին գիտությունների,
- բժշկական և դեղագործական գիտությունների,
- գյուղատնտեսական և կենսաբանական գիտությունների,
- հասարակական և հումանիտար գիտությունների:

ՀՀԲՀՀ գործունեության կարևոր ուղղություններից է միջազգային կապերի հաստատումն ու ամրապնդումը: Հիմնադրամի միջազգային նախագծերի շրջանակներում բելառուս գիտնականները համագործակցում են 30 երկրների իրենց գործընկերների հետ: Համագործակցությունն իրականացվում է ՀՀԲՀՀ և արտերկրի համապատասխան հիմնադրամների կամ համապատասխան կառույցների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա: Նմանօրինակ համաձայնագրեր են կնքվել ԱՄՆ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, նախկին ԽՍՀՄ և այլ երկրների համապատասխան կառույցների հետ: 2010 թ. նոյեմբերի 4-ին նման համաձայնագիր է կնքվել է նաև Հայաստանի Հանրապետության հետ՝ ՀՀԲՀՀ-ի և ԿԳՆ-ի միջև:

Մրցութային նախագծերի գիտական փորձաքննության կարգը

Փորձաքննության նպատակն է գնահատել ներկայացված նախագծերի գիտական մակարդակը և դրանց հաջող իրականացման հեռանկարները, ինչպես նաև մշակել առաջարկություններ ֆինանսավորման նպատակահարմարության և ծավալների մասին:

Յուրաքանչյուր գիտնական կարող է մասնակցել ՀՀԲՀՀ-ի կողմից անցկացվող մի քանի մրցույթի, սակայն նույն գիտնականը չի կարող ներգրավված լինել երեքից ավել նախագծերում (ինչպես ընթացիկ, այլնպես էլ նոր հայտարարված մրցույթի), իսկ միաժամանակ կարող է ղեկավարել երկուսից ոչ ավել նախագծեր, ընդ որում՝ մեկ մրցույթի շրջանակում չի կարող ղեկավարել մեկից ավել նախագիծ: Երիտասարդ գիտնականների համար նախատեսված մրցույթներում մեկ գիտնականը կարող է հանդես գալ որպես նախագծի ղեկավար նույն մրցույթում ընդամենը երկու անգամ:

ՀՀԲՀՀ-ի կողմից հետազոտության համար միջոցների տրամադրման նախապայման է ստացված արդյուքների հանրայնացումը՝ նշելով, որ հետազոտությունն իրականացվել է հիմնադրամի օժանդակությամբ:

Հիմնադրամի Գիտական խորհրդի և այլ աշխատանքային մարմինների որոշումները վերջնական են և բողոքարկման ենթական չեն:

Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀԲՀՀ-ի գործադիր վարչություն: Նույն օրը դրանք գրանցվում են և ստանում ծածկագրեր: Գրանցման ենթակա են միայն ժամկետում ներկայացված և բոլոր պահանջներին համապատասխան ձևավորված հայտերը: Հայտերի ստացման և գրանցման մասին տեղեկությունը տրամադրվում է հեղինակների հարցման հիման վրա:

Փորձաքննությունն իրականացնելու համար Հիմնադրամի Գիտական խորհրդին կից ստեղծվում են փորձագիտական խորհուրդներ ըստ գիտության ուղղությունների: Սկզբում մրցույթին ներկայացված նյութերը դիտարկվում են ՀՀԲՀՀ-ի Գործադիր վարչությունում՝ ներկայացված պահանջներին դրանց համապատասխանելիությունը ստուգելու համար: Դրանից հետո փորձագիտական խորհրդներում անցկացվում է նախնական փորձաքննություն՝ ստուգելու համար նախագծերի համապատասխանությունը մրցույթի պայմաններին: Այս կամ այն նախագիծը մրցույթից հանելու առաջարկը ներկայացվում է Հիմնադրամի գիտական խորհրդի համապատասխան բաժանմունքին, իսկ վերջնական որոշումն ընդունում է Գիտական խորհրդի բյուրոն:

Մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած նախագծերն անցնում են քառափուլ փորձաքննություն: Առաջին փուլում նախագծերն ուղարկվում են փորձագետներին: Յուրաքանչյուր նախագիծ ուղարկվում է առնվազն երկու փորձագետի, բացառությամբ երիտասարդ գիտնականների մրցույթների. այստեղ յուրաքանչյուր նախագիծ ուղարկվում է մեկ փորձագետի: Փորձագետների նշանակման որոշումը կայացնում է համապատասխան փորձագիտական խորհուրդը: Այնուհետև նախագծերը փորձագիտական եզրակացությունների հետ մեկտեղ քննարկվում են ՀՀԲՀՀ-ի փորձագիտական խորհրդներում, որտեղ էլ գաղտնի քվեարկությամբ որոշվում են ներկայացված նախագծերի գերակայություններն ըստ գիտության ուղղությունների: Երիտասարդ գիտնականների մրցույթների պարագայում որոշումներն ընդունվում են

առավելապես բաց քվեարկությամբ:

Երրորդ փուլում ՀՀԲՀՀ-ի Գիտական խորհրդի բաժանմունքները փորձագիտական խորհրդների ներկայացուցիչների հետ համատեղ դիտարկում են մրցույթներին ներկայացված հայտերն ու փորձաքննության նյութերը և առաջարկություններ ներկայացնում նախագծերի օժանդակության և ֆինանսավորման ծավալների մասին՝ հաշվի առնելով ՀՀԲՀՀ-ի ֆինանսավորման ընդհանուր ծավալները, իսկ միջազգային մրցույթների պարագայում՝ նաև արտասահմանյան գործընկերների որոշումները:

Վերջին՝ չորրորդ փուլում, Հիմնադրամի գիտական խորհուրդը որոշում է դրամաշնորհների հատկացման հարցը:

Նախագծերի բովանդակությունը, փորձագետների անունները և փորձաքննության գործընթացը գաղտնի են: ՀՀԲՀՀ-ի Գիտական խորհրդի և փորձագիտական խորհրդների անդամները, փորձագետները և Հիմնադրամի գործադիր վարչության աշխատակիցները իրավասու չեն հրապարակել դրանք: Փորձագետների վարձատրությունն իրականացվում է Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության բյուրոյի թիվ 624 որոշման հիման վրա (12 նոյեմբերի 2004թ.):

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև գիտատեխնիկական համագործակցությունը

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև գիտատեխնիկական համագործակցության պայմանագրային հիմքը դրվել է 2000թ. հոկտեմբերի 31-ին, երբ Երևանում կնքվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը (ուժի մեջ է մտել 2001թ. մարտի 1-ին): Համաձայնագրով ուրվագծվում են Հայաստանի և Բելառուսի միջև գիտատեխնիկական համագործակցության պայմաններն ու նպատակները: 4-րդ հոդվածով ամրագրված է, որ համագործակցությունը կարող է արտահայտվել, մասնավորապես, հետևյալ ձևերով.

- համատեղ գիտական, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև Կողմերի պետությունների տնտեսությունների համար առաջնային նշանակություն ունեցող հիմնարար հետազոտությունների իրականացում, դրանց փորձաքննության փոխադարձ անցկացում,
- գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համատեղ հրատարակում:

Նույն համաձայնագրի 3-րդ հոդվածն ամրագրում է, որ համագործակցության ընդհանուր ղեկավարումն ու համակարգումն իրականացվելու է ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ԲՀ գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից:

Հետագայում՝ 2010թ. մարտի 19-ին, Մինսկում կնքվեց համաձայնագիր ԳՊԿ-ի և ԲՀ գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի միջև համագործակցության վերաբերյալ: Ըստ 1-ին հոդվածի, համաձայնագրի առարկան «երկու Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ հիմնարար գիտական հետազոտություններին աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գիտական խմբերի և հետազոտողների միջև համագործակցության զարգացմանը նպաստելն է»: Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսվում է համագործակցությունն իրականացնել համատեղ մրցույթների միջոցով՝ «Հայաստանի և Բելառուսի գիտնականների խմբերի համատեղ իրականացվող նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի,

Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում համատեղ գիտական միջոցառումների (համագումարներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն) կազմակերպման նախագծերի՝ աջակցության արժանացած նախագծերի հետագա ֆինանսավորումով»:

4-րդ հոդվածով նախատեսվում է, որ կողմերն աջակցում են միմյանց գիտական նախագծերի փորձաքննության անցկացման և Հայաստանի ու Բելառուսի առաջատար գիտնականներին որպես փորձագետներ ներգրավելու հարցերում:

Ինչպես արդեն նշվել է, նույն թվականի նոյեմբերի 4-ին ԳՊԿ-ի և ՀՀԲՀՀ-ի միջև կնքվել է համագործակցության մասին համաձայնագիր, որը

հիմնականում կրկնում է ԲՀ գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ կնքված համաձայնագիրը: Սակայն դրանից բացի նույն օրը ստորագրվել է նաև ԳՊԿ-ի և ՀՀԲՀՀ-ի միջև կնքված համաձայնագրի հավելվածը՝ համաձայնագրի շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման կարգի վերաբերյալ: Ըստ այդ կարգի, 2010 թ. երկու տարին մեկ անգամ պետք է կազմակերպվեն համատեղ մրցույթներ: Դրանք անցկացվելու են հետևյալ գիտական ուղղություններով.

- մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա,
- ֆիզիկա և աստղագիտություն,
- քիմիա,
- կենսաբանություն և բժշկագիտություն,
- գիտություններ մարդու և հասարակության մասին,
- գիտություններ Երկրի մասին,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվիչ համակարգեր,
- ճարտարագիտական գիտությունների հիմնարար հիմունքներ:

Ըստ փաստաթղթի՝ մրցույթին չեն մասնակցում այն նախագծերը, որոնք.

- ներկայացվել են ժամկետից ուշ,
- արդեն իսկ ֆինանսավորվում են ՀՀ և ԲՀ բյուջեներից,
- արդեն իսկ ֆինանսավորվում են ՀՀԲՀՀ-ի, ՀՀ և ԲՀ այլ հիմնադրամների և կազմակերպությունների կողմից:

Հայտերը ներկայացվում են միաժամանակ՝ ԳՊԿ և ՀՀԲՀՀ: Հայկական և բելառուսական կողմերն ապահովում են մրցույթների անցկացումը, հայտերի անկախ փորձաքննությունը և օժանդակության արժանացած նախագծերի ֆինանսավորումը՝ յուրաքանչյուրն իր երկրում:

Կողմերից յուրաքանչյուրն իրականացնում է նախագծերի փորձաքննությունն ըստ իր կանոնակարգի: Փորձաքննության արդյունքների համատեղ քննարկման արդյունքում մրցույթին ներկայացված նախագծերի վերաբերյալ ընդունվում է վերջնական որոշում: Ընդունված նախագծերի տարեկան քանակը որոշվում է առկա միջոցների հիման վրա: Յուրաքանչյուր կողմ հաստատում է հաշվետվության սեփական ձևերն ու կանոնները:

Մասնակիցներին ներկայացվող պահանջները

Հայ-բելառուսական մրցույթների գիտական նախագծերի հայտերը ներկայացվում են համապատասխանաբար հայ և բելառուս գիտնականներից կազմված խմբերի կողմից: Մրցույթի հայկական և բելառուսական կողմի հայտատուները նախապես միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է կողմերի մոտ տարբերվել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից: Սակայն ներկայացված նախագծի հայերեն և ռուսերեն անվանումները պետք է ամբողջությամբ համընկնեն: Համատեղ մրցույթների նախագծերի իրականացման ժամկետը 12 կամ 24 ամիս է:

Հայկական կողմի պահանջների համաձայն, նախագծի ղեկավարը և մասնակիցները պետք է հանդիսանան պետական գիտական կազմակերպության աշխատակիցներ: Բելառուսական կողմում նմանատիպ պահանջ չկա: Նշվում է միայն, որ նախագծի մասնակիցները պետք է բնակվեն Բելառուսում և աշխատեն այդ երկրի ռեզիդենտ կազմակերպություններում: Խմբի մասնակիցների բնակության հարցը նշված է նաև հայկական կողմում. խմբի անդամները պետք է լինեն ՀՀ մշտական բնակիչներ և նախագծի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանում:

Հայկական կողմից նախագծում կարող է ներառվել մինչև չորս մասնակից (2-4): Հայկական կողմում հստակ նշված են մասնակիցներին ներկայացվող պահանջները. Մասնակիցները կարող են լինել պետական գիտական կազմակերպությունների (ներառյալ բուհերի) գիտական աշխատողներ (դասախոսներ), պետական պատվերով սովորող առկա և հեռակա ուսուցման ասպիրանտներ, մագիստրատուրայի, ինչպես նաև բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողներ: Բելառուսական կողմը նման հստակ պահանջներ խմբի անդամների համար չի սահմանում: Նշվում է միայն, որ առավելություն ունեն այն խմբերը, որոնց կազմում ընդգրկված են մարզային գիտական կազմակերպությունների և/կամ ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների ներկայացուցիչներ:

Նախագծի ղեկավարի համար հայկական կողմը սահմանում է հետևյալ պահանջները. «ղեկավար կարող է լինել գիտական աստիճան

ունեցող անձր, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված կամ երկու՝ առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ հրապարակումը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված երեք հոդվածի»:

Բելառուսական կողմի պահանջներում առկա է միայն գիտական հրատարակությունների մասը. նախագծի գիտական ուղղությամբ (հնարավոր է նաև հարակից բնագավառներում) առնվազն երեք հոդված հեղինակավոր ամսագրերում և/կամ արտոնագիր կամ մենագրություն՝ հրատարակված վերջին երեք տարիների ընթացքում:

Համաձայն հայկական կողմի պահանջների նախագծի ղեկավարը չի կարող գտնվել նախագծի կատարողի վարչական ենթակայության տակ: Բելառուսական կողմում բացակայում է նման հստակ ձևակերպված պահանջ: Երկու կողմերում էլ ամրագրված է, որ տվյալ գիտնականը հայ-բելառուսական մրցույթին կարող է լինել միայն մեկ նախագծի ղեկավար կամ կատարող:

Ինչ վերաբերում է այլ մրցույթներին մասնակցելու սահմանափակումներին, ապա ըստ հայկական կողմի հայ-բելառուսական մրցույթին չեն կարող մասնակցել այն դիմորդները, որոնք ԳՊԿ-ի այլ երկու մրցույթների շրջանակներում հաղթող ճանաչված թեմաների ղեկավար են կամ մասնակից: Բացառություն է արվում միայն «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթի շահառուների համար: Բելառուսական կողմի պարագայում տվյալ գիտնականը որպես կատարող կարող է ներգրավված լինել մինչև երեք նախագծերում, իսկ որպես ղեկավար՝ մինչև երկու: Մեկ մրցույթի շրջանակներում նույն գիտնականը կարող է ներկայացված լինել ընդամենը մեկ նախագծում՝ թե՛ որպես ղեկավար, թե՛ որպես կատարող:

Խմբի մասնակիցների վերաբերյալ հայկական կողմն ունի հստակ

ձևակերպված պահանջ՝ խմբում մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտական աշխատողի կամ ասպիրանտի կամ ուսանողի ներգրավվածության վերաբերյալ: Բելառուսական կողմը նման հստակ պահանջ չի ներկայացնում:

Ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ նախապայման է հետազոտության արդյունքների հրապարակումը գիտական պարբերականներում, ներառյալ հայկական և բելառուսական: Մեկ այլ նախապայման է նախագծի ղեկավարների համաձայնությունը նախագծի և դրա հաշվետվության անոտացիաների հրապարակման համար: Արգելվում է նույն նախագիծը ներկայացնել տարբեր մրցույթների:

Հայտերի բովանդակությունը պետք է համաձայնեցված լինի մասնակիցների կողմից և լինի իդենտիկ: Անհրաժեշտ է նաև հստակ ներկայացնել, թե նախագծի որ մասն է իրականացնելու հայկական կողմը, որը՝ բելառուսական, իսկ որ մասն է իրականացվելու համատեղ:

Հայ-բելառուսական համատեղ մրցույթների փորձաքննությունը

Մրցույթին ներկայացված հայտերն ենթարկվում են անկախ գիտական փորձաքննության. հայկական հայտերը ԳՊԿ-ի կողմից, բելառուսական հայտերը՝ ՀՀԲՀՀ-ի: Քանի որ բելառուսական կողմի փորձաքննության կարգն արդեն ներկայացվել է, ստորև կներկայացնենք գիտական փորձաքննության կազմակերպման կարգը Հայաստանում:

Ինչպես արդեն նշեցինք, կողմերից յուրաքանչյուրը գիտական փորձաքննությունն իրականացնում է առանձին՝ անկախ փորձագիտական համակարգի միջոցով: Փորձաքննության գործընթացը գաղտնի է: Տեխնիկական փորձաքննությունն անցած և մրցույթի պայմաններին բավարարող հայտերը ներկայացվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ ԳՊԿ-ի փորձագիտական շտեմարանում ներգրավված փորձագետների կողմից գիտական փորձաքննություն իրականացնելու համար: Դրա ընթացքում «գնահատվում է հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը

նախագիծը իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ»: Գիտական փորձաքննության հարցաթերթիկը լրացնելիս փորձագետը դրանում առկա յուրաքանչյուր հարցի պատասխանը տալիս է գնահատականի միջոցով. նվազագույնը՝ 0, առավելագույնը՝ 5 (0.5 միավորի ճշտությամբ):

Յուրաքանչյուր հայտ գնահատվում է երկու փորձագետի կողմից, որոնցից յուրաքանչյուրը լրացնում է վերը նշված հարցաթերթիկը: Փորձագետի գնահատականը կարող է կազմել գնահատման ընդհանուր սանդղակի առավելագույն միավորի մինչև 85%:

Խմբի ղեկավարի և մասնակիցների մասնագիտական որակավորումները գնահատվում են փորձագիտական խորհրդի կողմից և կարող են կազմել գնահատման ընդհանուր սանդղակի առավելագույն միավորի մինչև 15%:

Վերջնական գնահատականը «երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է»: Փորձաքննության ժամանակ հնարավոր է նաև երրորդ փորձագետի ներգրավումը: Դա տեղի է ունենում «երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50% և ավելի չափով տարբերվելու դեպքում»: Տվյալ դեպքում վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ իրար ավելի մոտ երկու գնահատականների միջին թվաբանականն է: Եթե առաջին երկու փորձագետների և երրորդ փորձագետի գնահատականների միջև հավասար տարբերություն է, ապա վերջնական գնահատականը երկու առավել մեծ գնահատականների միջին թվաբանականն է:

Գիտական փորձագիտական քննության մեջ ներգրավված բոլոր անձանց արգելվում է տեղեկություններ տրամադրել հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Գիտական փորձաքննության ավարտից հետո ԳՊԿ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համար առանձին-առանձին կազմում է վարկանիշային ցանկ՝ հիմնված գիտական փորձաքննության արդյունքների վրա (ըստ նվազման կարգի), և

ներկայացնում դրանք փորձագիտական խորհրդին՝ քննարկման համար: Իր հերթին փորձագիտական խորհուրդը ԳՊԿ-ի նախագահին է ներկայացնում հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

Ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ընդհանուր քանակն որոշվում է համաձայն կողմերի անցկացրած գիտական փորձաքննությունների արդյունքների և մրցույթի համար յուրաքանչյուր կողմի հատկացրած միջոցների: Ֆինանսավորման համար երաշխավորված նախագծերի ցանկը հրապարակվում է ԳՊԿ-ի կայքում:

Երկրորդ տարվա ֆինանսավորման մասին որոշումը կայացվում է նախագծի տարեկան հաշվետվության փորձաքննության հիման վրա: Դրա կարևոր պայմաններից են հաշվետվության ներկայացման ժամկետների պահպանումը և գրախոսվող ամսագրերում համատեղ հրապարակումների առկայությունը՝ չհաշված թեզիսները:

Հայտատուները գրավոր տեղեկացվում են իրենց հայտերի փորձաքննության արդյունքների մասին:

Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ

Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամը³ (ռուսերեն՝ Российский фонд фундаментальных исследований) հիմնվել է Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ «Ռուսաստանի Դաշնության գիտատեխնիկական ներուժի պահանմանն ուղղված անհետաձգելի միջոցների մասին» թիվ 426 հրամանագրով (27 ապրիլի 1992 թ.): Որպես ՀՀՌՀ-ի ստեղծման հիմնական նպատակ հրամանագրում նշված է Ռուսաստանի Դաշնության գիտատեխնիկական ներուժի պահպանման համար պայմանների ստեղծումը: ՀՀՌՀ-ի գործունեության հիմնական նպատակը նախաձեռնողական գիտական ծրագրերի աջակցությունն է: Նույն թվականի նոյեմբերի 3-ին հրապարակվեց ՌԴ կառավարության «Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի մասին» հրամանագիրը, որը հաստատեց հիմնադրամի կանոնադրությունը:

ՀՀՌՀ-ի կառուցվածքը

ՀՀՌՀ-ի կոլեգիալ ղեկավարման մարմիններն են հիմնադրամի խորհուրդը և հիմնադրամի խորհրդի բյուրոն: Կառավարման բարձրագույն մարմինն է հիմնադրամի խորհուրդը: Հիմնադրամի խորհրդի նախագահը հիմնադրամի կոլեգիալ կառավարման մարմնի ղեկավարն է և նշանակվում է ՌԴ նախագահի կողմից 5 տարի ժամկետով և կարող է զբաղեցնել իր պաշտոնը ոչ ավել, քան երկու անգամ անընդմեջ: Հիմնադրամի խորհուրդը բաղկացած է 41 հոգուց: Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարեկան 2 անգամ: Հիմնադրամի խորհրդի բյուրոն բաղկացած է հիմնադրամի խորհրդի 12 անդամներից: Բյուրոն գործում է հիմնադրամի խորհրդի նիստերի միջև ընկած ժամակահատվածում:

Հիմնադրամի միանձնյա գործադիր մարմինը հիմնադրամի տնօրենն է:

³ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ անվանումը այսուհետև ՀՀՌՀ:

Միջազգային համագործակցություն

ՀՀՌՀ-ի գործունեության կարևոր մաս են միջազգային համագործակցության ստեղծումն ու պահպանումը: Միջազգային և արտասահմանյան գիտական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցության ոլորտում ՀՀՌՀ-ը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

ա. օժանդակել միջազգային համագործակցության շրջանակներում հիմնարար գիտությունների բոլոր ոլորտներում ռուսաստանյան գիտնականների հետազոտությունների իրականացմանը,

բ. օժանդակել արտասահմանում անցկացվող գիտաժողովներին և խորհրդակցություններին ռուսաստանյան գիտնականների մասնակցությանը,

գ. ուսումնասիրել և կիրառել արտասահմանյան առաջատար հիմնադրամների փորձը հետազոտությունների մրցութային ֆինանսավորման ոլորտում:

Նշված նպատակներն իրականացնելու համար ՀՀՌՀ-ն ուղղակի կապեր է հաստատում արտասահմանյան և միջազգային հիմնադրամների և կազմակերպությունների հետ, ստորագրում է նրանց հետ գիտական համագործակցության և գիտական նախագծերի համատեղ իրականացման համաձայնագրեր: Ներկա պահին ՀՀՌՀ-ն նման համաձայնագրեր ունի շուրջ 25 երկրների ավելի քան 30 կազմակերպությունների հետ: Դրանց թվում են Բելգիան, Հոլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Չինաստանը, Ավստրիան, Բելառուսը, Մոնղոլիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Իսրայելը և այլն: 2010 թ. մայիսի 7-ին նմանատիպ համաձայնագիր ստորագրվել է նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտությունների պետական կոմիտեի և ՀՀՌՀ-ի միջև: Նշված համաձայնագրերի շրջանակներում իրականացվում են համատեղ գիտական նախագծերի մրցույթներ:

ՀՀՌՀ-ի մասնակցությունը միջազգային մրցույթներին ունենում է հետևյալ 4 ձևերը.

1. Մրցույթի հավասար ֆինանսավորում ՀՀՌՀ-ի և գործընկեր հիմնադրամի կողմից:

2. Առանձին ֆինանսավորում, երբ յուրաքանչյուր հիմնադրամ

Ֆինանսավորում է իր երկրի գիտնականներին: Հայաստանի պարագայում կիրառվում է ֆինանսավորման հենց այս տարբերակը:

3. Խառը ֆինանսավորում, երբ հիմնական միջոցները տրամադրում է գործընկեր հիմնադրամը, իսկ ՀՀՌՀ-ին ֆինանսավորում է միայն նախագծի ռուսաստանյան մասնակիցներին:

4. Համատեղ նախագծերը ֆինանսավորում է օտարերկրյա գործընկեր հիմնադրամը, իսկ ՀՀՌՀ-ին մասնակցում է փորձաքննությանն ու հայտերի ընտրությանը:

ՀՀՌՀ-ի միջազգային գործունեության ուղղություններից մեկը արտասահմանյան հիմնադրամների ազգային նախագծերի, ինչպես նաև օտարերկրյա հիմնադրամների կողմից ֆինանսավորվող օտարերկրյա և ռուսաստանյան գիտնականների համատեղ նախագծերի փորձաքննության իրականացման հարցում համագործակցությունն է:

Միջազգային համագործակցության ոլորտում ՀՀՌՀ-ի կարևոր գործառույթներից մեկը ռուսաստանցի և օտարերկրյա երիտասարդ հետազոտողների ներգրավումն է գիտական ծրագրերում, որոնք իրականացվում են Ռուսաստանի գիտական կազմակերպություններում: Յուրաքանչյուր տարի նման մրցույթին մասնակցության հայտերի թիվն աճում է. 2012 թ.՝ 590 հայտ, 2013թ.՝ 816 հայտ, 2014թ.՝ 945 հայտ, 2015թ.՝ 1098 հայտ: Նախագծերն իրականացվել են 21 երկրների երիտասարդ գիտնականների հետ, որոնց թվում էին նաև հայաստանյան հետազոտողները:

ՀՀՌՀ-ի միջազգային համագործակցության մեջ յուրահատուկ տեղ ունի ԱՊՀ երկրների հետ համագործակցության զարգացումը:

ՀՀՌՀ-ի կողմից անցկացվող մրցույթներ

Հիմնադրամն աջակցում է հիմնարար հետազոտությունների իրականացմանը գիտությունների հետևյալ ոլորտներում.

- մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա,
- ֆիզիկա և աստղագիտություն,
- քիմիա և նյութաբանություն,
- կենսաբանություն և բժշկական գիտություններ,
- Երկրի մասին գիտություններ,

- մարդու և հասարակության մասին գիտություններ,
- ինֆորմացիոն և տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվողական համակարգեր,

- ինժեներական գիտությունների ֆունդամենտալ հիմունքներ:
ՀՀՌՀ-ն իրականացնում է հետևյալ տեսակի մրցույթներ.

ա. Նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի մրցույթ:

բ. Ռուսաստանյան և միջազգային գիտական միջոցառումների կազմակերպման գիտական նախագծերի մրցույթ:

գ. Հիմնադրամի օժանդակությամբ իրականացված գիտական նախագծերի արդյունքում ստեղծված գիտական աշխատությունների հրատարակության նախագծերի մրցույթ:

դ. Հիմնադրամի օժանդակությամբ իրականացված գիտական նախագծերի արդյունքների հիման վրա գրված գիտահանրամատչելի հոդվածների մրցույթ:

ե. Օտարերկրյա հրատարակչությունների էլեկտրոնային գիտական ինֆորմացիոն ռեսուրսներին հասանելիություն ստանալու մրցույթ:

զ. Առաջատար գիտնականների ղեկավարությամբ Ռուսաստանի Դաշնության գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական նախագծերի մրցույթ:

է. Արշավների և դաշտային հետազոտությունների անցկացման գիտական նախագծերի մրցույթ, որոնք անհրաժեշտ են հիմնադրամի կողմից օժանդակված գիտական նախագծերի իրականացման համար:

ը. Միջազգային նախագծերի մրցույթներ: Հենց այս կատեգորիայի մեջ են մտնում համատեղ հայ-ռուսական մրցույթները, որոնք անցկացվում ԳՊԿ-ի և ՀՀՌՀ-ի կողմից:

թ. Երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունների նախագծերի մրցույթներ:

ժ. Նպատակաուղղված հիմնարար հետազոտությունների մրցույթներ:

ի. Տեղական նախագծերի մրցույթներ:

Հիմնադրամի աջակցությունը ստանալու պարտադիր նախապայման է կատարված հետազոտությունների արդյունքների հանրայնացումը, մասնավորապես, գրախոսվող գիտական հանդեսներում դրանց տպագրությունը: Մյուս պարտադիր նախապայմանն է հեղինակների համաձայնությունը՝ հիմնադրամի կողմից աջակցություն ստացած

նախագծերի անտացիաների և գիտական հաշվետվությունների հրապարակման վերաբերյալ:

ՀՀՌՀ-ի միջազգային մրցույթները նպատակ ունեն աջակցել ռուսաստանյան գիտնականներին միջազգային գիտական ծրագրերում և նպաստել նրանց համագործակցությանը արտասահմանյան գիտնականների հետ:

Միջազգային մրցույթի անցկացման համար հիմք է ծառայում ստորագրված համաձայնագիրը ՀՀՌՀ-ի և միջազգային կազմակերպության միջև, որով ամրագրվում են համատեղ մրցույթի անցկացման պայմանները և հաղթած նախագծերի ֆինանսավորման կարգը: Հարկ է նշել, որ միջազգայի մրցույթներում ֆինանսավորվում են հիմնադրամի Խորհրդի կողմից հաստատված գիտական ուղղություններով կատարվող հետազոտությունները: Միջազգային մրցույթին մասնակցելու անհրաժեշտ նախապայման է ռուսաստանյան և արտասահմանյան գիտնականների կողմից հայտերի միաժամանակյա ներկայացումը մրցույթին: Ըստ սահմանված կարգի, միևնույն գիտնականը կարող է միջազգային մրցույթներում որպես ղեկավար հանդես գալ «ա» տեսակի տարբեր համատեղ մրցույթներում, սակայն միևնույն տեսակի համատեղ մրցույթում կարող է լինել միայն մեկ նախագծի ղեկավար: Այսինքն, ԳՊԿ-ի հետ համատեղ անցկացվող «ա» տեսակի համատեղ միջազգային մրցույթում կարող է լինել միայն մեկ հայտի ղեկավար: Միջազգային մրցույթների ժամանակ աջակցություն ստացած նախագծերի ֆինանսավորումը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կողմը ֆինանսավորում է միայն իր երկրի գիտնականներին:

Ռուսաստանում անցկացվող համատեղ միջազգային գիտական միջոցառումների ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով. ընդունող կողմը հոգում է միջոցառման կազմակերպչական ծախսերը, իսկ ուղարկող կողմը հոգում է իր մասնակիցների ճանապարհային, կացության և այլ տեսակի ծախսերը:

Միջազգային մրցույթների մեջ առանձին ուղղություն են կազմում երիտասարդ գիտնականների նախագծերի աջակցության ծրագրերը:

2011 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀՌՀ-ի Խորհրդի բյուրոյի որոշմամբ հաստատվել են հիմնադրամի մրցույթների չափանիշները: Մասնավորապես, նախաձեռնող գիտահետազոտական նախագծերի

- համար ընդունված են հետևյալ չափանիշները.
- հետազոտության հիմնարար նշանակությունը,
 - ակնկալվող արդյունքների համապատասխանելիությունը միջազգային մակարդակին,
 - դրված խնդրի լուծման մոտեցումների նորարարության մակարդակը,
 - նպատակի և խնդրի շարադրման հստակությունը,
 - ներկայացված հետազոտության թեմայի արդիականությունը,
 - ներկայացված նախագծի իրականացման հավանականությունը,
 - վերջին երեք տարիների ընթացքում նախագծի ղեկավարի հրապարակումների թիվը առաջատար հղման ցուցիչների շտեմարաններում ընդգրկված ամսագրերում,
 - վերջին երեք տարիների ընթացքում նախագծի կատարողների հրապարակումների թիվը առաջատար հղման ցուցիչների շտեմարաններում ընդգրկված ամսագրերում,
 - նախկինում իրականացված դրամաշնորհների և/կամ պետական պատվերների հաջող իրականացման փորձ,
 - հայցվող ֆինանսավորման հիմնավորվածությունը,
 - ՀՀՌՀ-ի այլ նախագծերն իրականացնելիս խախտումների առկայությունը:

Մրցույթի անցկացման կարգը

Բոլոր մրցույթների համար դիտարկվում են միայն այն հայտերը, որոնք մուտքագրվել են հիմնադրամի ինտերակտիվ տեղեկատվական համակարգի միջոցով: Այդ գործընթացը ներառում է հետևյալ փուլերը. հայտատուների գրանցում (եթե վերջիններս դեռևս գրանցված չեն համակարգում), հայտերի առցանց ներկայացում: Գրանցման համարը ստանալուց հետո հայտի ղեկավարը պարտավոր է հայտի տպագիր մեկ օրինակ այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ 10 օրվա ընթացքում ներկայացնել հիմնադրամ:

Ընդունվում են միայն հիմնադրամի տեղեկատվական համակարգից ներբեռնված և տպված հայտերը, որոնք ստացել են համապատասխան համար: Իսկ պայմաններին ոչ համապատասխան կազմված հայտերը, ինչպես նաև վերջնաժամկետից հետո ներկայացվածներն այլևս չեն ընդունվում: Մրցույթին մասնակցելու իրավունք չեն ստանում նաև այն

հայտերը, որոնց վերնագիրն ու բովանդակությունն ամբողջությամբ համընկնում են մեկ այլ պլանային թեմայի վերնագրի և բովանդակության հետ, որը ֆինանսավորվում է դաշնային բյուջեից:

Արգելվում է միևնույն օրացուցային տարում նույն նախագիծը ներկայացնել ՀՀՌՀ-ի տարբեր մրցույթներին: Որևէ մրցույթի շրջանակներում աջակցություն ստացած նախագիծն այլևս հնարավոր չէ ներկայացնել այլ մրցույթի:

ՀՀՌՀ-ում գիտական ձորձաքննության անցկացման կարգը

Փորձաքննությունը ՀՀՌՀ-ի գործունեության առանցքային մասն է, որի հիման վրա գնահատվում է հայտի գիտական որակը:

Ներկայացված նախագծերի ֆինանսավորման մասին որոշումներն ընդունվում են միայն փորձաքննության արդյունքների հիման վրա: ՀՀՌՀ-ն իրականացնում է 10-ից ավելի հիմնական մրցույթներ, որոնց թվում են նաև միջազգային մրցույթները: Հայտերի և հաշվետվությունների փորձաքննությունն իրականացնելու համար ներգրավվում են ավելի քան 3500 փորձագետ և ՀՀՌՀ-ի փորձագիտական խորհրդների 1000 անդամ: Տարեկան կտրվածքով իրականացվում է 65.000-70.000 գիտական փորձաքննություն:

Փորձաքննության գործընթացն իրականացվում է հետևյալ ընթացակարգով:

Գիտական նախագծերի փորձաքննությունն իրականացվում է ըստ գիտության ուղղությունների բաժանված փորձագիտական խորհրդների անդամների և ՀՀՌՀ-ի փորձագետների կողմից: Յուրաքանչյուր հայտ ենթարկվում է անկախ և բազմափուլ փորձաքննության: ՀՀՌՀ-ում հայտը գրանցելուց հետո այն գնահատում են 2-3 փորձագետ, որոնք գործում են իրարից անկախ և անանուն: Դրանից հետո հայտերն ու անկախ փորձագետների կողմից իրականացված սկզբնական փորձաքննության արդյունքներն ուղարկվում են Փորձագիտական խորհրդի բաժանմունք, որը կազմված է 5-15 հոգուց և որի իրավասության ներքո գտնվում են գիտության տվյալ ոլորտի 4-7 նեղ ուղղություն: Հիմնադրամի խորհրդի համար վերջնական առաջարկներ մշակում է Փորձագիտական խորհուրդը,

որի կազմի մեջ մտնում է 70-100 անդամ:

Գիտական փորձաքննության իրականացման կարգ

ՀՀՌՀ-ում փորձաքննություններն իրականացվում են հատուկ մշակված կարգի համաձայն:

ՀՀՌՀ-ի մրցույթներին ներկայացված նախագծերի փորձաքննությունն ունի հետևյալ նպատակները .

- նախագծի գիտական մակարդակի գնահատում,
- նշված ժամկետներում հայտատուների կողմից ներկայացված արդյունքների ստացման հավանականության գնահատում,
- դրամաշնորհի չափի մասին առաջարկությունների նախապատրաստում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրամաշնորհի չափը նախօրոք ֆիքսված է:

Նախագծերի իրականացման հաշվետվությունների փորձաքննությունը հետապնդում է հետևյալ նպատակները .

- ստացված գիտական արդյունքների գնահատում,
- ստացված արդյունքների համեմատում հայտում ներկայացված արդյունքների հետ,
- նախագծի փաստացի ծախսերի հիմնավորվածության գնահատում,
- շարունակվող նախագծերի համար հայտում ներկայացված անձանց կողմից դրա իրականացման հնարավորության գնահատում,
- առաջարկությունների նախապատրաստում դրամաշնորհի հաջորդ տարվա չափի մասին (շարունակվող նախագծերի պարագայում):

Մրցույթին ներկայացված, ինչպես նաև ընթացիկ նախագծերի փորձաքննությունն իրականացվում է հիմնադրամի խորհրդի կողմից հաստատված չափանիշների հիման վրա, որոնք հրապարակված են հիմնադրամի կայքէջում:

ՀՀՌՀ-ն իրականացնում է միայն այն նախագծերի փորձաքննությունը, որոնց մասնակցությունը մրցույթին թույլատրված է հիմնադրամի փորձագիտական խորհրդի որոշմամբ:

Մրցույթներին ներկայացված նախագծերի փորձաքննության ընդհանուր կարգը հետևյալն է. հիմնադրամի փորձագետների կողմից ներկայացվում են փորձագիտական եզրակացություններ յուրաքանչյուր

նախագծի վերաբերյալ, որից հետո նախագծերը և դրանց փորձագիտական եզրակացությունները կոլեգիալ քննարկվում են հիմնադրամի փորձագիտական խորհրդներում և փորձագիտական խորհրդների բաժանմունքներում:

Մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած նախագծերն ուղարկվում են ՀՀՌՀ-ի փորձագետներին: Նախագծերի բաշխումն ըստ փորձագետների կատարվում է ՀՀՌՀ-ի դասակարգման համաձայն: Նախագծերի բաշխումը ըստ փորձագետների և դրանց հետագա ուղարկումը արվում է միայն փորձագիտական խորհրդի նախագահի և մասնագիտական խորհրդի բաժանմունքների համակարգողների կողմից՝ մասնագիտական խորհրդի նախագահի հետ համաձայնեցված: Նախագծերի բաշխման ընթացքում փորձագիտական խորհրդի նախագահը, նրա տեղակալը և բաժանմունքների համակարգողները քայլեր են ձեռնարկում՝ հնարավոր «շահերի բախումները» բացառելու ուղղությամբ: Նախագիծը կարող է փորձաքննության ուղարկվել նաև փորձագիտական խորհրդի անդամին:

Նախագծերի բովանդակությունը և ըստ փորձագետների դրանց բաշխման մասին տեղեկությունները գաղտնի են: Յուրաքանչյուր նախագիծ ուղարկվում է նախապես որոշված թվով փորձագետների: Սակայն անհրաժեշտության դեպքում փորձաքննության մեջ կարող են ներգրավվել նաև լրացուցիչ փորձագետներ, երբ, օրինակ, տվյալ նախագծի վերբերյալ փորձագետների կարծիքները խիստ տարբերվում են իրարից: Փորձագիտական եզրակացությունների մասին տեղեկատվությունը գաղտնի է: Փորձագիտական խմբի անդամները, փորձագետները, ինչպես նաև ՀՀՌՀ-ի աշխատակիցները իրավունք չունեն փորձաքննության արդյունքները քննարկել նախագծերի ղեկավարների և կատարողների հետ կամ այդ արդյունքները հայտնել որևէ այլ անձանց: Նախագծի ղեկավարի համար իր նախագծի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը հասանելի է դառնում միայն ֆինանսավորման հաստատման կամ մերժման մասին որոշում կայացնելուց հետո: Նախագծերի փորձաքննությունն իրականացնելիս հիմնադրամի և փորձագետների, ներառյալ փորձագիտական խորհրդի անդամների, փոխհարաբերությունները կարգավորվում են «Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ դաշնային պետական բյուջետային հիմնարկության համար

փորձաքննության իրականացման կանոններով»: Հիմնադրամի մրցութային բաժիններն աջակցում են նախագծերը փորձագետներին բաշխելու և նրանց եզրակացությունները հավաքելու գործընթացին:

Փորձագիտական եզրակացությունները ստանալուց հետո դրանք նախագծի հետ մեկտեղ քննարկվում են փորձագիտական խորհրդի բաժանմունքի նիստում: Որոշումները կայացվում են կոլեկտիվ քննարկման արդյունքում: Փորձագիտական խորհրդի բաժանմունքը որոշում է.

- աջակցել կամ մերժել նախագիծը,
- նախագծի իրականացման դրամաշնորհի չափը (բացառությամբ այն դեպքերի, երբ դա ֆիքսված է),
- նախագիծը լրացուցիչ փորձաքննության ուղարկել,
- ընդունել կամ մերժել փորձագիտական եզրակացությունը:

Նշվածներից միայն լրացուցիչ փորձաքննության ուղարկելու մասին որոշումն է վերջնական. մնացածները կրում են խորհրդատվական բնույթ:

Այնուհետև նախագծերը, դրանց փորձագիտական եզրակացությունները և փորձագիտական խորհրդների բաժանմունքների որոշումները քննարկվում են համապատասխան փորձագիտական խորհրդի նիստի ժամանակ: Փորձագիտական խորհուրդը որոշում է.

- աջակցել կամ մերժել նախագիծը,
- դրամաշնորհների ծավալները,
- ուղարկել նախագիծը լրացուցիչ փորձաքննության,
- լրացուցիչ փորձաքննության նշանակման հարցի համաձայնեցումը,
- ընդունել կամ մերժել փորձագիտական եզրակացությունը:

Փորձագիտական խորհրդի նշված որոշումներից վերջին երեքը վերջնական են, իսկ մնացած երկուսը կրում են խորհրդատվական բնույթ: Փորձագիտական խորհրդի որոշումները ևս ընդունվում են կոլեկտիվ քննարկման արդյունքում:

Իսկ փորձագիտական խորհրդի՝ խորհրդատվական բնույթ կրող որոշումները քննարկում և հաստատում է ՀՀՌՀ-ի խորհուրդը:

Հարկ է նշել, որ տարբեր տեսակի մրցույթների փորձաքննություններն ունեն իրենց առանձնահատկությունները: Արտասահմանյան կազմակերպությունների հետ համատեղ մրցույթների անցկացման և միջազգային գիտական սեմինարների կազմակերպման մրցույթների դեպքում գործում է հետևյալ կարգը.

- Մրցույթին նախագծերի մասնակցության մասին որոշումն ընդունում է միջազգային գիտական նախագծերի փորձագիտական խորհուրդը:
- Նախագծերի փորձաքննությունն իրականացնում են մրցութային բաժինների փորձագիտական խորհրդները, որից հետո միջազգային կապերի վարչության փորձագիտական խորհրդին են ներկայացնում փորձաքննության ուղարկված նախագծերի վարկանիշները և դրամաշնորհների ծավալների վերաբերյալ առաջարկները: Միջազգային գիտական նախագծերի փորձագիտական խորհրդի նախագահը (կամ նրա տեղակալը) իրավասու է անձամբ բաշխելու նախագծերն ըստ փորձագետների:
- Նախագծերի օժանդակության կամ մերժման, ինչպես նաև դրամաշնորհների ծավալների մասին որոշումներն ընդունում է միջազգային գիտական նախագծերի փորձագիտական խորհուրդը՝ հիմնվելով համապատասխան գիտական ուղղությունների փորձագիտական խորհրդների առաջարկների և արտասահմանյան կազմակերպության կողմից իրականացված փորձաքննության արդյունքների վրա: Եթե վերջինս հրաժարվում է ֆինանսավորել նախագիծը, ապա ավտոմատ կերպով բացառվում է նաև ՀՀՌՀ-ի օժանդակությունը:
- Հիմնադրամի խորհրդի բաժանմունքի անդամները կարող են ծանոթանալ գիտական ուղղությունների փորձագիտական խորհրդների առաջարկներին և արտասահմանյան կազմակերպության փորձաքննության արդյունքներին: Սակայն միջազգային գիտական ծրագրերի փորձագիտական խորհրդի որոշումները փակ են հիմնադրամի խորհրդի բաժանմունքի անդամներ համար:

Հստակ ընթացակարգ է գործում նաև ընթացիկ նախագծերի գիտական և ֆինանսական տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև ավարտին հասած նախագծերի եզրափակիչ հաշվետվությունների փորձաքննության վերաբերյալ: Այդ փորձաքննության արդյունքները հաշվի են առնվում նախագծի ֆինանսավորման շարունակականության հարցը քննարկելիս կամ հետագայում տվյալ գիտնականի նոր նախագծերը հաստատելիս:

Գիտական փորձաքննության սկզբունքները

2012 թ. մայիսին ավելի քան 50 երկրների գիտական հիմնադրամների ղեկավարները, այդ թվում նաև ՀՀՌՀ-ի ղեկավարը, արել են գիտական փորձաքննության սկզբունքների վերաբերյալ հայտարարություն, որում ամրագրված են հետևյալ սկզբունքները.

- Փորձագետների կոմպետենտությունը: Փորձագետները պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և փորձ՝ հայտերը գնահատելու համար և պետք է ընտրվեն հստակ չափանիշների հիման վրա:
- Փորձաքննության թանփանցիկությունը: Որոշումները պետք է կայացվեն նախօրոք ներկայացված և հստակ նկարագրված սկզբունքների, գործընթացների և չափանիշների հիման վրա:
- Փորձաքննության անաչառությունը: Հայտերը պետք է դիտարկվեն անկողմնակալ՝ գնահատելով դրանց առավելությունները: Շահերի հնարավոր բախումները պետք է հայտնաբերվեն և կարգավորվեն նախօրոք հաստատված և հրապարակված ընթացակարգերի համաձայն:
- Փորձաքննության ուղղվածությունը: Փորձաքննությունը պետք է համապատասխանի մրցույթի բնույթին, հետազոտության ոլորտին և արտացոլի հետազոտական աշխատանքի ծախսերն ու հնարավոր բարդությունները:
- Փորձաքննության գաղտնիությունը: Հայտի բոլոր նյութերը չեն կարող հրապարակվել փորձագետների կամ փորձաքննության հետ առնչություն ունեցող կազմակերպությունների կողմից:
- Բարեխղճությունը և համապատասխանությունը էթիկայի նորմերին:

ՀՀՌՀ-ի փորձագետները

ՀՀՌՀ-ի փորձագետ կարող է լինել բարձր որակավորում ունեցող հեղինակավոր մասնագետը, ով ունի գիտությունների դոկտորի (որպես կանոն) կամ գիտությունների թեկնածուի (որպես բացառություն) գիտական աստիճան և պատկանում է ակտիվ գործող գիտնականների շարքին:

Հիմնադրամի փորձագետների կազմի մեջ մտնում են 2000-ից ավել փորձագետներ, որոնց 1/3-ը յուրաքանչյուր տարի ենթարկվում է ռոտացիայի: Համաձայն հիմնադրամի կանոնների, գիտնականը չի կարող ՀՀՌՀ փորձագետ լինել ավելի քան 6 տարի անընդմեջ:

Գնալով ավելանում է առցանց իրականացվող փորձաքննությունների ծավալը, որոնք արդեն կազմում են բացահայտ մեծամասնություն: Դրա շնորհիվ հնարավոր է դարձել փորձաքննության մեջ ավելի ակտիվ ներգրավել մարզային փորձագետներին, որոնց թիվը որոշ դեպքերում հասնում է 50%-ի: Բարձր գիտական որակավորում ունենալուց բացի, փորձագետ լինելու հիմնական չափանիշ է գիտնականի անբասիր մասնագիտական հեղինակությունը:

Փորձագիտական խորհուրդներ

Փորձագիտական խորհուրդները ստեղծվում են գիտության յուրաքանչյուր ճյուղի համար, իսկ արդեն դրա կազմում ստեղծվում են տվյալ գիտության ճյուղի ուղղությունների բաժանմունքներ: Մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության փորձագիտական խորհրդներում գործում են ավելի քան 40 գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իսկ մարդու և հասարակության մասին գիտությունների խորհրդներում ներկայացված են 70-ից ավել գիտական կազմակերպությունների գիտնականներ:

ՀՀՌՀ-ի կազմում գործում են մի շարք փորձագիտական խորհուրդներ, ինչպես օրինակ՝

- մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և մեխանիկայի,
- ֆիզիկայի և աստղագիտության,
- քիմիայի և նյութաբանության,
- կենսաբանության և բժշկական գիտությունների,
- Երկրի մասին գիտությունների,
- միջազգային գիտական ծրագրերի և այլն:

Այդ խորհրդներն իրականացնում են մի շարք գործառույթներ.

ա. Կատարում են գիտական ծրագրերի իրականացման հայտերի նախնական ընտրություն, դրանց իրականացման վերբերյալ հաշվետվությունների քննարկում՝ հիմնվելով փորձագիտական քննության

արդյունքում ստացված նախագծերի գնահատականների վրա և հաշվի առնելով ՀՀՌՀ-ի խորհրդի կողմից հաստատված չափանիշները:

բ. Մշակում են առաջարկություններ գիտական նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:

գ. ՀՀՌՀ-ի խորհրդի դատին են ներկայացնում առաջարկություններ՝ կապված գիտական նախագծերի մրցույթների իրականացման կարգի և գիտական նախագծերի փորձաքննության հետ:

դ. Փոխանցում են գիտական նախագծերի փորձաքննության արդյունքները ՀՀՌՀ-ի խորհրդի բյուրոյին՝ քննարկելու և հաստատելու համար:

ե. ՀՀՌՀ-ի խորհրդի նախագահին են ներկայացնում ՀՀՌՀ-ի մասնագիտական խորհրդների նախագահների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ:

Փորձագիտական խորհրդի և դրա բաժանմունքների որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ, ոչ պակաս, քան ներկա գտնվողների 50%-ի, պայմանով, որ նիստին պետք է ներկա գտնվեն անդամների ոչ պակաս, քան 50%-ը:

Փորձագիտական խորհրդների կազմերը Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատվում են 3 տարի ժամկետով:

Փորձագիտական խորհրդների աշխատանքները կատարելագործելու ուղղությամբ ջանքերը շարունակական բնույթ են կրում: 2015 թ. ՀՀՌՀ-ի Տեղեկատվական-վերլուծական կոմպլեքսային համակարգում (ՏՎԿՀ) ավելացվել են նոր համակարգային բլոկներ: Մասնավորապես, ներմուծվել է «Նախագծերի փորձաքննություն» ենթահամակարգը (“Экспертиза проектов”), որն էականորեն բարձրացրել է փորձագետների աշխատանքի արդյունավետությունը՝ ներկայացված նախագծերի գիտական փորձաքննությունն անցկացնելիս: Այդ ենթահամակարգը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր նախագծի համար կատարել ամենահամապատասխան փորձագետների ընտրություն՝ հաշվի առնելով նաև «շահերի բախման» հանգամանքը: Դրանից հետո իրականացվում է փորձագիտական հարցաթերթիկների տրամադրումը ընտրված փորձագետներին և փորձագիտական եզրակացությունների ներկայացման ժամկետների վերահսկում: Բացի այդ ներմուծվել է նաև ֆինանսական բլոկը, որը հնարավորություն է տալիս արագացնել հաղթած նախագծերի

ֆինանսավորումը և էականորեն բարձրացնել ՏՎԿՀ-ի վերլուծական հնարավորությունները: Համակարգը բարձրացնում է նաև մրցութային բաժինների աշխատանքի որակը փորձաքննության կազմակերպչական օժանդակության հարցում:

ՏՎԿՀ-ը մշակվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համակարգային հետազոտությունների գիտահետազոտական ինստիտուտի կողմից (Федеральное государственное учреждение Федеральный научный центр Научно-исследовательский институт системных исследований Российской академии наук): Դրա նպատակն է իրականացնել ՀՀՌՀ-ի մրցութային գործընթացի տեղեկատվական աջակցություն: Այն հնարավորություն է տալիս մրցութային գործընթացի մասնակիցներին համացանցի միջոցով իրականացնել տեղեկության փոխանակումն ու փոխգործողությունը: Մասնավորապես, նախագծերը մրցույթներին ներկայացվում են հենց այս համակարգի միջոցով: Հայաստանում այս համակարգի համակերպը ԳՊԿ կողմից մշակված grants.scs.am հարթակն է:

ՀՀՌՀ-ի հետ համատեղ իրականացվող մրցույթներ

Ինչպես արդեն նշվել է, 2010թ. մայիսի 7-ին ԳՊԿ-ի և ՀՀՌՀ-ի միջև կնքվել է համագործակցության մասին համաձայնագիր: (Համաձայնագրի իրավական հիմք է հանդիսացել 1993թ. հունվարի 11-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը): Որպես համաձայնագրի առարկա նշված է համատեղ հիմնարար գիտական հետազոտություններին աջակցելու նպատակով երկու երկրների գիտական խմբերի և հետազոտողների միջև համագործակցության զարգացումը:

Համագործակցությունն իրականացվում է համատեղ մրցույթների անցկացման տեսքով.

- երկու երկրների գիտնականների խմբերի համատեղ իրականացվող նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի իրականացում,

- երկու երկրներում համատեղ գիտական միջոցառումների կազմակերպում և աջակցություն ստացած նախագծերի հետագա

Ֆինանսավորում:

Կողմերի համաձայնությամբ կարող են կիրառվել համագործակցության այլ ձևեր ևս: Յուրաքանչյուր կողմն իրավունք ունի միակողմանի աջակցել երկու երկրների գիտնականների համագործակցությանը:

4-րդ հոդվածով ամրագրված է կողմերի փոխադարձ օժանդակությունը գիտական նախագծերի փորձաքննության իրականացման և որպես փորձագետ երկու երկրների առաջատար գիտնականների ներգրավման հարցերում:

2012 թ. փետրվարի 28-ին ԳՊԿ-ի և ՀՀՌՀ-ի միջև կնքվել է գիտական ծրագրերի մրցույթի անցկացման լրացուցիչ պայմանագիր, որտեղ որպես մրցույթների նպատակ նշված է երկու երկրների գիտնականների կողմից համատեղ իրականացվող գիտահետազոտական նախաձեռնությունների աջակցությունը: Պայմանագրով նախատեսվում է սկսած 2012թ. երկու տարին մեկ անգամ կազմակերպել համատեղ մրցույթներ հետևյալ գիտական ուղղություններով.

- մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա,
- ֆիզիկա և աստղագիտություն,
- քիմիա,
- կենսաբանություն և բժշկագիտություն,
- գիտություններ մարդու և հասարակության մասին,
- գիտություններ Երկրի մասին,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվիչ համակարգեր,
- ճարտարագիտական գիտությունների հիմնարար հիմունքներ:

Համաձայն պայմանագրի դրույթների՝ մրցույթին մասնակցելու իրավունքից զրկվում են.

- վերջնաժամկետից ուշ ներկայացված նախագծերը,
- երկու երկրների պետական բյուջեներից արդեն իսկ ֆինանսավորվող նախագծերը,

- ՀՀՌՀ-ի կամ հայաստանյան և ռուսաստանյան այլ հիմնադրամների և կազմակերպությունների կողմից աջակցություն ստացած նախագծերը:

Կողմերն ապահովում են մրցույթների անցկացումը, անկախ փորձաքննության իրականացումը և աջակցություն ստացած նախագծերի ֆինանսավորումը յուրաքանչյուրն իր երկրում:

Մրցույթին մասնակցելու համար հայտերը պետք է լինեն համաձայնեցված և ներկայացվեն միաժամանակ հայկական կողմից ԳՊԿ, ռուսական կողմից՝ ՀՀՌՀ: Չհամաձայնեցված կամ միայն մեկ կողմից ներկայացված հայտերը չեն քննարկվում և չեն մասնակցում մրցույթին:

Յուրաքանչյուր գիտնական որպես ղեկավար կարող է մրցույթին ներկայացնել միայն մեկ գիտական նախագիծ: Դրանից բացի որպես կատարող նա իրավունք ունի մասնակցել միայն մեկ նախագծում (այլ):

Հայտերի անկախ փորձաքննությունը յուրաքանչյուր կողմ իրականացնում է իր կանոնակարգի համաձայն: Վերջնական որոշումն ընդունվում է փորձաքննության արդյունքների համատեղ քննարկման արդյունքում: Նախագծերի իրականացման տևողությունը երկու տարի է:

Մրցույթին մասնակցում են հայ և ռուս գիտնականներից կազմված խմբերը: Հայկական կողմից խմբում կարող է լինեն մինչև չորս մասնակից՝ ներառյալ խմբի ղեկավարը, ռուսական կողմից խումբը կարող է ընդգրկել մինչև 10 մասնակից:

Նշենք, որ ըստ համաձայնեցված կարգի՝ պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող նախագծերը չեն կարող մասնակցել մրցույթին:

Ներկայացվող պահանջներին հայտի համապատասխանությունը երաշխավորվում է հայտի ղեկավարի կողմից:

Հայտը ներկայացնող հայկական կողմի բոլոր մասնակիցները պետք է լինեն ՀՀ մշտական բնակիչներ և նախագծի իրականացման ժամանակ բնակվեն Հայաստանում: Ռուսական կողմի մասնակիցները պետք է լինեն կամ ՌԴ քաղաքացիներ, կամ ռուսաստանյան կազմակերպությունում աշխատող և Ռուսաստանում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիներ:

Հայկական խմբում կարող են ընդգրկվել պետական կազմակերպություններում և բուհերում աշխատող գիտնականները, գիտական աշխատողները, դասախոսները, պետական պատվերով առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրատուրայի, ինչպես նաև բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները: Համանման մոտեցում է գործում նաև ռուսական կողմում, սակայն առկա չէ պետական կազմակերպությունում կամ բուհում աշխատելու/ուսանելու պայմանը: Նշված է միայն, որ ֆիզիկական անձիք պետք է նախքան մրցույթին դիմելը համաձայնեցնեն, թե որ կազմակերպությունը (բացի պետական

հաստատության) կտրամադրի պայմաններ՝ նախագիծն իրականացնելու համար: Դա վերաբերում է նաև դրամաշնորհի գումարներն իր հաշվեհամարին ընդունելու և դրանք տրամադրելու վերաբերյալ համաձայնությանը: Բացի այդ, հայկական կողմի պահանջների համաձայն՝ խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի մինչև 35 տարեկան գիտաշխատող, ասպիրանտ կամ ուսանող: Այս պահանջը ևս բացակայում է ռուսական կողմում:

Հայկական կողմը հստակ ամրագրել է նախագծի ղեկավար լինելու համար անհրաժեշտ պայմանները. առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված: Բացի այդ ղեկավար չի կարող լինել նախագծի մասնակցի վարչական ենթակայության տակ գտնվող անձը: Ռուսական կողմում առկա է միայն վերջին պայմանը:

Երկու կողմում էլ ամրագրված է, որ նույն գիտնականը սույն համատեղ մրցույթի շրջանակներում կարող է հանդիսանալ միայն մեկ նախագծի ղեկավար: Հայկական կողմն այս պահանջը տարածում է նաև կատարողների վրա: Բացի այդ, հայկական կողմում ամրագրված է, որ հայ-ռուսական մրցույթին մասնակցելու իրավունքից զրկված են այն դիմորդները, որոնք ԳՊԿ-ի այլ երկու մրցույթների շրջանակներում հաղթող ճանաչված թեմաների ղեկավար են կամ մասնակից: Բացառություն է արվում միայն «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթի շահառուների համար:

Նախագծերի փորձաքննությունը ռուսական կողմից իրականացվում է վերևում ներկայացված եղանակով, իսկ հայկականը նման է ՀՀԲՀՀ-ի հետ համատեղ իրականացվող մրցույթների նախագծերի փորձաքննությանը, որն արդեն ներկայացվել է:

Փորձաքննության արդյունքները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամ

Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամը⁴ (ռուսերեն՝ Российский гуманитарный научный фонд) ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության կառավարության 1994 թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1023 որոշման հիման վրա: Ի սկզբանե հումանիտար և հասարակագիտական հետազոտությունները ևս ֆինանսավորվում էին 1992 թ. ստեղծված Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից: Սակայն որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ նման մեկտեղումը որոշակի խնդիրներ էր ստեղծում: Մասնավորապես, ՀՀՌՀ-ի բարձրագույն մարմնում՝ Խորհրդում, 28 հոգուց միայն 5-ն էին ներկայացնում հումանիտար և հասարակական գիտությունները, իսկ որոշ գիտական ուղղություններ ընդհանրապես ներկայացված չէին: Այդ իսկ պատճառով մի շարք ակադեմիկոսներ դիմեցին ՌԴ կառավարությանը՝ հումանիտար ոլորտի համար առանձին հիմնադրամ ստեղծելու առաջարկով, ինչը բավարարվեց:

ՌՀԳՀ- կառուցվածքը

Համաձայն ՌԴ կառավարության 2012թ. փետրվարի 15-ի թիվ 132 որոշմամբ հաստատված ՌՀԳՀ-ի կանոնադրության նոր տարբերակի ՌՀԳՀ-ի ղեկավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը հիմնադրամի խորհուրդն է: Հիմնադրամի խորհրդի կազմի մեջ են մտնում 25 անդամ և խորհրդի նախագահը: Հիմնադրամի խորհրդի անդամների կազմը հաստատում է ՌԴ կառավարությունը, իսկ խորհրդի նախագահին նշանակում է ՌԴ նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Վերջինս խորհրդի անդամների և հիմնադրամի տնօրենի թեկնածուներին ներկայացնում է ՌԴ կրթության և գիտության նախարարությանը: Խորհրդի նախագահն ու նրա տեղակալը չեն կարող զբաղեցնել իրենց պաշտոններն անընդմեջ երկու անգամից ավելի: Հիմնադրամի խորհրդի գործունեության ժամկետը հինգ տարի է:

⁴ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ անվանումը այսուհետև՝ ՌՀԳՀ:

Խորհուրդն իր որոշումներն ընդունում է ներկա գտնվողների ձայների մեծամասնությամբ: Առավել կարևոր հարցերն ընդունվում են ձայների որակական մեծամասնությամբ: Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին երկու անգամ: Խորհրդի նախագահն իրավասու է գումարել արտակարգ նիստ: Հիմնադրամի խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում գործում է Հիմնադրամի բյուրոն, որի կազմի մեջ են մտնում խորհրդի 7 անդամները՝ ներառյալ նախագահն ու նրա տեղակալը: Բյուրոն հիմնադրամի կոլեգիալ մարմինն է: Բյուրոյի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, իսկ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Հիմնադրամի կազմում գործում են փորձագիտական խորհուրդներ, որոնք խորհրդատվական մարմիններ են և կազմվում են գիտական և գիտատեխնիկական համայնքի ներկայացուցիչներից:

ՌՀԳՀ-ի մշտապես գործող գործադիր և կարգադրիչ մարմինը հիմնադրամի ապարատն է: Նրա կազմի մեջ են մտնում տնօրենը, տնօրենի տեղակալները, հիմնադրամի ստորաբաժանումների ղեկավարները և հիմնադրամի ապարատի աշխատակիցները:

ՌՀԳՀ-ն ունի նաև տնօրեն, որին պաշտոնում նշանակում է ՌԴ նախագահը հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել նշանակվել տնօրենի պաշտոնում:

Կանոնադրությամբ ամրագրված են ՌՀԳՀ-ի հիմնական նպատակներն ու գործունեության տեսակները.

1. Հումանիտար հետազոտությունների ոլորտում մի շարք ուղղություններով գիտական, գիտահետազոտական ծրագրերի և նախագծերի մրցութային ընտրության իրականացում, այդ թվում հումանիտար գիտությունների ոլորտում գիտական հետազոտությունների անցկացում, գիտական միջոցառումների կազմակերպում, հումանիտար գիտությունների ոլորտում մարզային և միջազգային գիտական համագործակցության իրականացում՝ ներառյալ համատեղ գիտական նախագծերի ֆինանսավորում և այլն: Վերջին կետի հիման վրա ՌՀԳՀ-ը զարգացնում է միջազգային համագործակցություն շուրջ 20 երկրների հիմնադրամների և կազմակերպությունների հետ, որոնց թվում են Ֆրանսիան, Նորվեգիան, Չինաստանը, Գերմանիան, Շվեյցարիան, Հունաստանը, Հայաստանը և այլն: 2000 թ. հիմնադրամն անցկացնում է

միջազգային մրցույթներ:

2. Գիտական նախագծերի փորձաքննության իրականացում մրցութային փուլում և դրանց իրականացման ողջ ընթացքում:

3. Գիտական նախագծերի մրցութային ընտրության, ինչպես նաև գիտական միջոցառումների անցկացման կազմակերպչական և տեղեկատվական ապահովումը:

ՌՀԳՀ-ի մրցույթները

ՌՀԳՀ-ն կողմից անցկացվող մրցույթները միավորված են 5 բլոկների մեջ.

1. պատմական գիտություններ,
2. տնտեսական գիտություններ,
3. հասարակական գիտություններ,
4. բանասիրական գիտություններ և արվեստագիտություն,
5. մարդու համալիր հետազոտություն, հոգեբանություն, կրթության հիմնարար խնդիրներ:

Մրանք իրենց հերթին բաժանվում են գիտության ավելի նեղ ուղղությունների, որոնք ներառում են գրեթե բոլոր հասարակական և հումանիտար գիտությունները:

ՌՀԳՀ-ն անցկացնում է վեց տեսակի մրցույթներ.

1. Հիմնական մրցույթներ:
2. Մարզային մրցույթներ, որոնց ֆինանսավորմանը հավասարապես մասնակցում են ՌԴ սուբյեկտների իշխանությունները:
3. Միջազգային մրցույթներ, որոնք իրականացվում են ՌՀԳՀ-ի և արտասահմանյան կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա՝ ռուսաստանցի և այլ երկրների գիտնականների մասնակցությամբ:
4. Նպատակային մրցույթներ:
5. Ռուսաստանյան այլ կազմակերպությունների և գերատեսչությունների հետ համատեղ իրականացվող մրցույթներ:
6. Գիտահանրամատչելի գրքերի տպագրման համար մրցույթներ:

Հիմնադրամի տրամադրած միջոցների մեծ մասն ուղղվում է գիտահետազոտական արդյունքների ստացմանը, սակայն ֆինանսավորում հատկացվում է նաև հետևյալ գործունեության համար.

1. արշավներ,
2. գիտաժողովների կազմակերպում և մասնակցություն դրանց աշխատանքներին,
3. վերապատրաստում և աշխատանք արխիվներում,
4. գրքերի հրատարակում,
5. էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների ստեղծում:

Մրցույթներին ներկայացված հայտերի ընտրությունն իրականացվում է գիտական փորձաքննության հիման վրա:

ՌՀԳՀ-ի փորձագետները

2013 թ. տվյալների համաձայն՝ ՌՀԳՀ-ի փորձագիտական համակարգում կա ավելի քան 1200 ռուսաստանյան, ինչպես նաև 50-ից ավել արտասահմանյան փորձագետ:

Մկսած 2010 թ. հիմնադրամն առաջինը Ռուսաստանում սկսեց ընտրել փորձագետներին բաց մրցույթների հիման վրա: Ցանկացած գիտնական, որը համապատասխանում է հիմնադրամի փորձագետ լինելու համար ներկայացվող պայմաններին (դոկտորի գիտական աստիճան, գիտական բարձր որակավորում և այլն), կարող է փորձագետ դառնալու հայտ ներկայացնել: Ներկայացված թեկնածությունները դիտարկվում են փորձագիտական խորհուրդների անդամների կողմից, որից հետո գաղտնի քվեարկությամբ նրանցից ընտրվում են նոր փորձագետներ:

Փորձագիտական խորհուրդներ

ՌՀԳՀ-ի կազմում գործում են հետևյալ փորձագիտական խորհուրդները .

- բանասիրության և մշակութաբանության խորհուրդ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների խորհուրդ,
- գիտահանրամատչելի հրատարակությունների պատրաստման մրցույթի անցկացման խորհուրդ,
- միջազգային և նպատակային մրցույթների անցկացման խորհուրդ,

- գլոբալ խնդիրների և միջազգային հարաբերությունների խորհուրդ,
- մարզային մրցույթների խորհուրդ,
- երիտասարդական մրցույթների խորհուրդ,
- պատմության, հնագիտության և ազգագրության խորհուրդ,
- տնտեսական գիտությունների խորհուրդ,
- փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, իրավագիտության և գիտաբանության խորհուրդ,
- մարդու համալիր հետազոտության, հոգեբանության, մանկավարժության, առողջության և մարդու էկոլոգիայի սոցիալական խնդիրների խորհուրդ,
- «Ղրիմը Ռուսաստանի պատմության, մշակույթի և տնտեսության մեջ» նպատակային մրցույթի անցկացման խորհուրդ:

Փորձագիտական խորհուրդներն իրականացնում են հետևյալ գործառույթները .

1. Իրականացնում են գիտական նախագծերի փորձաքննությունը մրցույթների, ինչպես նաև դրանց իրականացման ողջ ընթացքում:
2. Մշակում են առաջարկություններ մրցույթի արդյունքում ընտրված նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:
3. Մշակում են առաջարկություններ գիտական նախագծերի մրցույթների անցկացման կարգի վերաբերյալ:

Գիտական փորձաքննության անցկացման կարգը ՌՀԳՀ-ում

Յուրաքանչյուր մրցույթի գիտական փորձաքննությունն ունի իր որոշակի առանձնահատկությունները, սակայն ընդհանուր առմամբ դրանք բոլորն էլ իրականացվում են չորս փուլով և բավական նման ընթացակարգով: Առաջին փուլով հայտերն ուղակվում են մինչև 3 փորձագետի: Փորձագետները.

1. Որոշում են ներկայացված գիտական աշխատանքի բնույթը: Հիմնադրամի համար նախընտրելի են հիմնարար բնույթի հետազոտությունները, սակայն գիտության հիմնարար և կիրառական հատման կետում գտնվող հետազոտությունները նույնպես կարող են

Ֆինանսավորում ստանալ:

2. Գնահատում են ակնկալվող արդյունքների գիտական արժեքը, ներկայացված թեմայի արդիականությունը, հետազոտության իրականացման մեթոդաբանական և այն միջոցները, որոնք առկա են հայտատուի մոտ՝ իր ներկայացրած նախագիծն իրականացնելու համար:
3. Գնահատում են հայտերը ներկայացրած հետազոտական կոլեկտիվների որակավորումը և նրանց գիտական ձեռքբերումներն ու կարողությունները:
4. Հաստատում կամ մերժում են հայցվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը:

Երկրորդ փուլով փորձագետների եզրակացությունները քննարկվում են փորձագիտական խորհրդի բաժանմունքում, որի արդյունքում տրվում է բաժանմունքի եզրակացությունը: Այնուհետև երրորդ փուլով եզրակացությունները ներկայացվում են համապատասխան գիտական ուղղության փորձագիտական խորհրդի պլենար նիստին: Փորձագիտական խորհուրդն ամփոփում է նախագծի գնահատումը և առաջարկություններ կայացնում Հիմնադրամի Խորհրդին: Ֆինանսական բոլոր որոշումները պարտադիր կարգով ներկայացվում են Հիմնադրամի խորհրդի հաստատմանը: Միայն այս որոշման հիման վրա է, որ հատկացվում են դրամաշնորհները, ինչն էլ փորձաքննության վերջին՝ չորրորդ փուլն է:

Փորձաքննությունը ՌՀԳՀ-ում իրականացվում է գիտական նախագծերի փորձաքննության կարգի հիման վրա, որը ներկայացվում է ստորև:

Հիմնադրամը մրցութային կարգով իրականացնում է ներկայացված նախագծերի ընտրություն՝ հիմնվելով գիտական փորձաքննության արդյունքների վրա: Փորձաքննության ենթարկվում են նաև օժանդակություն ստացած նախագծերի հաշվետվությունները (ընթացիկ և վերջնական): Հիմնադրամի փորձագիտական համակարգը բաղկացած է փորձագիտական խորհրդներից և փորձագետներից: Փորձագիտական խորհուրդները Հիմնադրամի խորհրդատվական մարմիններն են:

I. Ընդհանուր դրույթներ

1. Փորձագետներն ու փորձագիտական խորհուրդներն իրականացնում են գիտական նախագծերի փորձաքննությունը մրցութային փուլում,

ինչպես նաև դրանց իրականացման ողջ ընթացքում:

2. Փորձաքննությունը գնահատում է ներկայացված նախագծի գիտական մակարդակը, դրա իրականացման իրատեսականությունը, ինչպես նաև առաջարկություններ է ներկայացնում նախագծի ֆինանսավորման նպատակահարմարության և ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:
3. Փորձաքննությունն իրականացվում է ՌՀԳՀ-ի փորձագետների և փորձագիտական խորհրդների կողմից համաձայն գիտության այն ուղղության, որը նշվում է հայտի ղեկավարի կողմից: Փորձաքննությունն իրականացվում է նախագծի գնահատման հիմնական չափանիշների համաձայն: Դրանք են.

- նախագծի թեմատիկայի համապատասխանությունը հիմնադրամի կողմից ֆինանսավորվող գիտության ուղղություններին,
- առաջարկվող հետազոտության արդիականությունն ու գիտական նորույթը,
- ակնկալվող արդյունքների գիտական արժեքը,
- կիրառվող մեթոդների, մեթոդիկայի և գործիքակազմի հիմնավորվածությունը,
- հայտը ներկայացրած խմբի գիտական պոտենցիալը,
- աշխատանքային պլանի համապատասխանությունը ներկայացված խնդիրներին,
- հայցվող ֆինանսավորման ծավալների հիմնավորվածությունը:

Հիմնադրամի փորձագիտական խորհուրդները մշակում են առաջարկություններ՝ մրցույթի արդյունքում ընտրված նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ: Առաջարկությունները մշակելիս հաշվի են առնվում.

- նախատեսված աշխատանքների բովանդակությունն ու ծավալը,
- իրականացնողների քանակն ու նրանց գիտական որակավորումը,
- հարակից կազմակերպությունների ծառայությունների ծախսերը,
- գործուղումների ծախսերը,

- այլ ծախսերը:

4. Մրցույթով ընտրված նախագծերի ընթացիկ տարվա ֆինանսավորման ծավալը որոշում է Հիմնադրամի խորհուրդը: Նախագծերի ֆինանսավորման հետ կապված այլ հարցերը ևս մտնում են Հիմնադրամի խորհրդի իրավասության մեջ:

Փորձաքննությունն իրականացնելիս փորձագետն իրավունք չունի առաջարկել, տրամադրել ներկայացված նախագծի համար դրա ղեկավարի կողմից նշված գումարից ավել գումար: Եթե փորձագետի կարծիքով հայցվող գումարը բավարար չէ նախագիծն իրականացնելու համար, ապա այդ նախագիծը չի կարող ներկայացվել հաստատման:

5. Մրցույթին ներկայացված նախագծերի հայտերի նախնական գնահատումն ու ընտրությունն իրականացնում է Հիմնադրամի խորհրդի բյուրոն: Հիմնադրամի խորհուրդը մրցութային հանձնաժողովի դերակատարություն ունի մրցույթին ներկայացված հայտերի գնահատման և ընտրության հարցում, ինչպես նաև այն հաստատում է մրցույթների և կատարման փուլում գտնվող նախագծերի հաշվետվությունների փորձաքննության արդյունքները: Նախագծերի օժանդակման և ֆինանսավորման ծավալների մասին որոշումները Խորհուրդը կայացնում է փորձագիտական խորհրդների առաջարկությունների հիման վրա:

6. Փորձաքննության ողջ գործընթացը գաղտնի է, և փորձագետներն ու Հիմնադրամի աշխատակիցներն իրավունք չունեն դրա մասին որևէ տեղեկություն հայտնել: Փորձաքննությունը իրականացնող փորձագետները նշվում են ծածկագրերով: Ըստ փորձագետների հայտերի բաշխման տեղեկությունը հասանելի է սահմանափակ թվով մարդկանց, որոնց թվում են Հիմնադրամի խորհրդի նախագահը, նրա տեղակալը, համապատասխան փորձագիտական խորհրդի նախագահն ու համակարգողները, հիմնադրամի տնօրենը:

Հիմնադրամն իրականացնում է բաց քննարկումներ փորձաքննության ընթացակարգերի վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում բարեփոխում դրանք, հրապարակում մանրամասն տեղեկություններ ներկայացված հայտերի վերաբերյալ, իրականացված նախագծերի հաշվետվություններ և այլն, կազմակերպում է փորձաքննության

որակի անկախ ստուգում և այլ գործառույթներ:

7. Օժանդակություն չստացած նախագծերի ղեկավարները կարող են դիմել Հիմնադրամ և մրցույթի արդյունքների հրապարակումից հետո երկու ամսվա ընթացքում ստանալ իրենց նախագծերի փորձաքննության արդյունքները:

II. Փորձագիտական խորհուրդներ

1. Փորձագիտական խորհուրդները.

- Իրականացնում են գիտական նախագծերի փորձաքննությունը մրցույթի ժամանակ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն ստացած նախագծերի իրականացման բոլոր փուլերում:
- Մշակում են առաջարկություններ մրցույթի արդյունքներով աջակցություն ստացած նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:
- Մշակում են առաջարկություններ գիտական նախագծերի մրցույթի իրականացման վերաբերյալ:

2. Հիմնադրամի խորհրդի նախագահը ներկայացնում, իսկ խորհուրդը ձևավորում և հաստատում է փորձագիտական խորհրդների կազմերը: Անհրաժեշտության դեպքում հիմնադրամի խորհրդի բյուրոն կարող է դրանց կազմում փոփոխություն մտցնել: Յուրաքանչյուր փորձագիտական խորհրդի կազմում ձևավորվում են բաժանմունքներ՝ ըստ գիտության ուղղությունների:

Առանձին դեպքերում հնարավոր է հատուկ փորձագիտական խորհրդների ձևավորում՝ միջառարկայական նպատակային ծրագրերի փորձաքննությունը իրականացնելու համար:

Փորձագիտական խորհուրդները կազմված են նախագահից, տեղակալներից, որոնք համապասխան բաժանմունքների համակարգողներն են, և խորհրդի անդամներից: Փորձագիտական խորհրդների անդամները և Հիմնադրամի փորձագետները հեղինակավոր գիտնականներ են՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանով, որոնք ղեկավար պաշտոն չեն զբաղեցնում գիտական և կրթական հաստատություններում (տնօրեն, ռեկտոր): Որոշ դեպքերում գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալու պահանջը պարտադիր չէ:

3. Փորձագետներն ու փորձագիտական խորհուրդներն իրականացնում են գիտական նախագծերի փորձաքննությունը մրցութային փուլում, ինչպես նաև դրանց իրականացման ողջ ընթացքում: Փորձաքննության արդյունքները ներկայացվում են Հիմնադրամի խորհրդի և դրա բյուրոյի քննարկմանը, որի արդյունքում արդեն խորհուրդը կայացնում է վերջնական որոշում:
4. Փորձագիտական խորհրդի նախագահի, նրա տեղակալների և փորձագիտական խորհրդի անդամների թեկնածությունները հաստատում է Հիմնադրամի խորհուրդը: Նախատեսվում է փորձագիտական խորհրդի անդամների ռոտացիա: Հնարավոր է փորձագիտական խորհրդի վաղաժամ լուծարում կամ դրա նախագահի փոփոխություն: Նման նախաձեռնությամբ Հիմնադրամի խորհրդում կամ խորհրդի բյուրոյում կարող է հանդես գալ Հիմնադրամի խորհրդի նախագահը: Փորձագիտական խորհրդի կազմը կարող է փոփոխվել խորհրդի բյուրոյի կողմից:
5. Մարզային մրցույթներ իրականացնելու համար Հիմնադրամի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների միջև կնքված համաձայնագրի հիման վրա ստեղծվում են մարզային փորձագիտական խորհուրդները, որոնք խորհրդատվական մարմիններ են: Դրանց կազմը համաձայնեցվում է ՌՀԳՀ նախագահի հետ և հաստատվում դաշնության սուբյեկտի ադմինիստրացիայի կամ կառավարության ղեկավարի կողմից:
6. Փորձագիտական խորհուրդներն իրավասու են.
 - Իրականացնել հայտերի և գիտական նախագծերի հաշվետվությունների փորձաքննություն և մշակել առաջարկություններ դրանց ֆինանսավորման չափի մասին:
 - Փորձաքննության արդյունքներով կազմել հայտերի ռեյտինգային ցուցակ՝ Հիմնադրամի խորհրդի բյուրոյին ներկայացնելու համար:
 - Մշակել առաջարկություններ աջակցություն ստացած նախագծերն ըստ գիտության ուղղությունների և նախագծերի տեսակների բաշխման վերաբերյալ՝ Հիմնադրամի խորհրդի բյուրոյին ներկայացնելու համար,
 - Իրականացնել հումանիտար գիտությունների առանձին

ուղղություններում արդի վիճակի և զարգացման հեռանկարների վերլուծություն, վերհանել ձևավորված գիտական առաջնահերթությունները:

- Մշակել այս կամ այն նախագիծն աջակցելու կամ մերժելու հիմնավորում՝ Հիմնադրամի խորհրդի բյուրոյի անդամների հայցի հիման վրա:
- Կատարել փորձագիտական խորհրդի գործունեության ոլորտում փորձագետների ընտրություն:
- Մշակել առաջարկություններ ՌՀԳՀ դասակարգչի, ինչպես նաև գիտական նախագծերի մրցույթի անցկացման կարգի վերաբերյալ փոփոխությունների և լրացումների վերաբերյալ:

7. Փորձագիտական խորհրդի և դրա բաժանմունքների աշխատանքը իրականացվում է նիստերի միջոցով, որոնց պետք է ներկա լինեն անդամների ընդհանուր թվի կեսից ոչ պակասը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

8. Փորձագիտության արդյունքների հիման վրա փորձագիտական խորհրդի նախագահները կամ նրանց տեղակալները ներկայացնում են հաշվետվություններ հիմնադրամի խորհրդին և վերջինիս բյուրոյին, ինչպես նաև դրանց նիստերի ժամանակ ներկայացնում են փորձագիտական խորհրդի առաջարկները:

III. Փորձագետներ

1. ՌՀԳՀ-ի փորձագետներ են գործող գիտնականները, հումանիտար գիտությունների ոլորտների երևելի ներկայացուցիչները, որոնք ունեն գիտությունների դոկտորի գիտության աստիճան (բացառությամբ որոշ դեպքերի):

2. Հիմնադրամի փորձագետների կազմը հաստատվում է Հիմնադրամի խորհրդի կողմից՝ խորհրդի նախագահի ներկայացման հիման վրա: Նույն գիտնականը կարող է փորձագետ լինել միանգամից գիտության մի քանի ուղղություններով: Հիմնադրամի խորհրդի բյուրոն իրավասու է փոփոխություններ կատարել փորձագետների կազմում:

3. Հետագայում փորձագետի անունը չի նշվում, այլ նշվում է միայն նրա ծածկագիրը և նրան կցված գիտական ուղղության ծածկագիրը:

IV. Փորձագետների և փորձագիտական խորհրդների անդամների ընտրության կարգը

Փորձագիտական խորհրդների անդամների և փորձագետների ընտրությունն իրականացվում է Հիմնադրամի խորհրդի բյուրոյի կողմից հաստատված փորձագետների ընդունելության մասին հայտարարության համաձայն:

1. Փորձագիտական խորհրդի անդամի ընտրությունն իրականացնում է Հիմնադրամի խորհրդի բյուրոն՝ բաց մրցույթին հայտ ներկայացրած և համապատասխան փորձագիտական խորհրդի կողմից առաջարկված թեկնածուների վարկանիշային քվեարկության արդյունքում: Որոշումն ընդունվում է ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

Մասնագիտական խորհրդների նախագահներն ընտրվում են հիմնադրամի խորհրդի կողմից՝ նախագահի ներկայացմամբ: Ընտրությունն իրականացվում է դարձյալ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե ոչ մեկին ընտրել չի հաջողվում, ապա Հիմնադրամի նախագահը նշանակում է ժամանակավոր պաշտոնակատար փորձագիտական խորհրդի անդամներից մինչև հաջորդ ընտրությունները:

2. Փորձագետների ընտրությունն իրականացվում է հետևյալ կերպ: Նախ ՌՀԳՀ-ի խորհրդի բյուրոն սահմանում է փորձագետների առավելագույն թիվը գիտության տարբեր ուղղությունների համար: Ապա փորձագիտական խորհրդների բաժանմունքները դիտարկում են փորձագետների թեկնածուների հայտերը, նրանց հարցաթերթիկները և մշակում են առաջարկներ փորձագիտական խորհրդների համար: Վերջիններս յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին վարկանիշային քվեարկության միջոցով կատարում են փորձագետների ընտրություն: Այնուհետև ընտրված փորձագետների անունները ներկայացվում են Հիմնադրամի խորհրդի բյուրոյի նիստում, որի հավանությունը ստանալու պարագայում փորձագետների անունները ներկայացվում են Հիմնադրամի խորհրդին՝ վերջնական հաստատման համար:

V. Փորձագիտական խորհրդների անդամների և փորձագետների իրավունքներն ու պարտականությունները

1. Փորձագիտական խորհրդի անդամները և փորձագետներն անմիջական պատասխանատվություն են կրում փորձագիտական եզրակացության մեջ ներկայացված հետևությունների որակի համար: Փորձագիտական եզրակացությունները կարող են ներկայացվել հայտատուներին՝ պահպանելով փորձագետների անանունությունը:

Եթե փորձագիտական խորհրդի անդամի կամ փորձագետի գործողությունների արդյունքում հայտատուի կողմից հեղինակային իրավունքի խախտման բողոք է ներկայացվում Հիմնադրամ, ապա փորձագիտական խորհրդի անդամը կամ փորձագետը պատասխանատվություն է կրում՝ համաձայն գործող օրենսդրության:

2. Փորձագետը/փորձագիտական խորհրդի անդամն իրավունք ունի.

- Հրաժարվել իրեն ուղարկված հայտի/հաշվետվության փորձաքննությունն իրականացնելուց, եթե առկա է «շահերի բախում», անձնական հանգամանքների պատճառով հնարավոր չէ ժամանակին իրականացնել փորձաքննությունը կամ էլ ներկայացված հայտի բովանդակությունը դուրս է փորձագետի հետաքրքրությունների շրջանակից:

- Անհրաժեշտության դեպքում ստանալ լրացուցիչ տեղեկություն իրեն ուղարկված հայտի/հաշվետվության վերաբերյալ:

- Անհրաժեշտության դեպքում ստանալ խորհրդատվություն Հիմնադրամի աշխատակիցներից փորձագիտության իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ:

- Սեփական նախաձեռնությամբ հրաժարվել ՌՀԳՀ-ի փորձագետի կամ փորձագիտական խորհրդի անդամի կարգավիճակից:

3. Փորձագետը/փորձագիտական խորհրդի անդամը պարտավոր է.

- Ստորագրել «Փորձագետի հուշագիրը», որով հաստատում է փորձագետ լինելու պայմաններին ծանոթ լինելը:

- Ծանոթ լինել իր գործունեության և դրամաշնորհների հետ կապված նորմատիվ փաստաթղթերին և կարգերին:

- Գաղտնի պահել ՌՀԳՀ-ի տեղեկատվական համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ տեղեկությունները՝ անունը համակարգում ու գաղտնաբառը:

- Երկօրյա ժամկետում մերժել իրեն ուղարկված հայտի/հաշվետվության փորձաքննության իրականացումը կամ հաստատել այն:
 - Երկու շաբաթվա ընթացքում իրականացնել իրեն ուղարկված հաշվետվության/հայտի որակյալ և անաչառ փորձաքննությունը:
 - Երաշխավորել փորձաքննության արդյունքում իրեն տրամադրված նախագծի և ՌՀԳՀ-ի փորձագիտական գործունեության մասին տեղեկության լիակատար գաղտնիությունը:
 - Ժամանակին ստորագրել և Հիմնադրամ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ իրականացված փորձաքննության դիմաց վճար ստանալու համար:
4. Փորձագետը/փորձագիտական խորհրդի անդամը կարող են ներգրավվել հայտերի/հաշվետվությունների փորձաքննության մեջ ՌՀԳՀ-ի մրցութային ողջ ցիկլի ընթացքում:
 5. Փորձագետների/փորձագիտական խորհրդների անդամների գործունեությունը հայտերի/հաշվետվությունների փորձաքննությունն իրականացնելիս ամեն անգամ ամրագրվում է պայմանագրի միջոցով:

VI. Փորձաքննության առաջին փուլը

1. Հայտերի բաշխումն ըստ փարձագետների իրականացում են փորձագիտական խորհրդների բաժանմունքների համակարգողները՝ հայտերում նշված դասակարգչի ծածկագրի և նախագծի բովանդակության հիման վրա:
2. Հայտերը բաշխելիս, բաժանմունքների համակարգողները պետք է խուսափեն «շահերի բախման» իրավիճակներից:
3. Եթե «շահերի բախում» այնուամենայնիվ տեղի է ունենցել, փորձագետը պարտավոր է տեղյակ պահել դրա մասին: Դրա, ինչպես նաև սեփական գիտական հետաքրքրությունների և հայտի բովանդակության անհամապատասխանության հիման վրա փորձագետը կարող է հրաժարվել փորձաքննությունն իրականացնելուց: Այդ դեպքում նշանակվում է նոր փորձագետ:
4. Փորձաքննության համար հատկացվող առավելագույն ժամանակահատվածը երկու շաբաթ է:
5. Հայտի փորձաքննության առաջին փուլի արդյունքում փորձագետը ներկայացնում է Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատված

փորձագիտական հարցաթերթիկի հարցերի պատասխանները, որոնք արտահայտվում են բալերի տեսքով, հակիրճ գրախոսությունը և ֆինանսավորման վերաբերյալ առաջարկությունները:

VII. Փորձաքննության երկրորդ փուլը

1. Երկրորդ փուլում հայտերը քննարկվում են փորձագիտական խորհրդների համապատասխան բաժանմունքներում, որտեղ ներկայացվում են նաև փորձաքննության առաջին փուլի արդյունքները: Քննարկման արդյունքները ներկայացվում են փորձագիտական խորհրդի պլենար նիստի ժամանակ: Արդյունքում փորձագիտական խորհուրդները ներկայացնում են հիմնադրամի խորհրդի բյուրոյին հայտերի փորձաքննության արդյունքները և մշակում են առաջարկություններ ընտրված գիտական նախագծերի ֆինանսավորման չափերի վերաբերյալ:

Փորձագիտական խորհրդներում հայտերը քննարկելիս պարտադիր հաշվի են առնում փորձաքննության առաջին փուլի արդյունքներն ու բաժանմունքներում հայտերի քննարկման արդյունքները: Այն դեպքում, երբ քննարկվող հայտի ղեկավարը եղել է նաև ավարտված մեկ այլ նախագծի ղեկավար, ապա քննարկվող հայտի մասին վերջնական որոշումն ընդունելիս հաշվի են առնում նաև ավարտված նախագծի եզրափակիչ հաշվետվության գնահատականը:

2. Եթե փորձագիտական խորհրդի կարծիքը չի համընկնում առաջին փուլում փորձաքննությունն իրականացրած փորձագետների կարծիքի հետ, կամ եթե փորձագիտական խորհրդի բաժանմունքում նախագծի քննարկման արդյունքները սկզբունքորեն տարբերվում են առաջին փուլում փորձաքննությունն իրականացրած փորձագետների կարծիքից, ապա փորձագիտական խորհրդի կայացրած որոշումը պետք է մանրամասն հիմնավորվի բաժանմունքի ներկայացրած կարծիքում:

3. Փորձագիտական խորհրդի և դրա բաժանմունքների նիստերի ժամկետները որոշվում են ՌՀԳՀ-ի ապարատի կողմից՝ մրցույթների անցկացման ժամկետներին համապատասխան:

4. Փորձաքննության երկրորդ փուլի արդյունքներն ամփոփվում են բաժանմունքների նիստերի և համապատասխան փորձագիտական խորհրդների պլենար նիստերի արձանագրությունների տեսքով:

VIII. Տարբեր տեսակի նախագծերի փորձաքննության առանձնահատկությունները

ՌՀԳՀ ներկայացված և մրցույթին մասնակցելու իրավունք ստացած բոլոր նախագծերն անցնում են բազմափուլ անկախ փորձաքննություն:

1. Գիտական հետազոտություններ իրականացնելու նախագծեր, գիտական աշխատություններ հրատարակելու նախագծեր, միջառարկայական հետազոտություններ իրականացնելու նախագծեր, առանձին գիտնականների կողմից հետազոտություններ իրականացնելու նախագծեր, արշավների, դաշտային և սոցիոլոգիական հետազոտությունների, գիտա-վերականգնողական աշխատանքների նախագծեր և գիտական միջոցառումների կազմակերպման նախագծեր: Այս խմբին պատկանող յուրաքանչյուր հայտ առաջին փուլով ներկայացվում է երկու փորձագետի և համապատասխան փորձագիտական խորհրդի մեկ անդամի: Երկրորդ փուլում հայտերն ու փորձագետների եզրակացությունները քննարկվում են փորձագիտական խորհրդների համապատասխան բաժանմունքների կողմից, որից հետո քննարկվում են համապատասխան փորձագիտական խորհրդի պլենար նիստի ժամանակ:

2. Գիտական նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման ստեղծման նախագծեր: Այս տեսակի նախագծերն առաջին փուլում ուղարկվում են երեք փորձագետի: Փորձաքննությունն իրականացնում են համապատասխան գիտության ոլորությամբ մեկ փորձագետ և տեղեկատվական համակարգերի փորձագիտական խորհրդի մեկ անդամ: Փորձագիտական երրորդ եզրակացությունը ներկայացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետը: Երկրորդ փուլում հայտերը քննարկվում են տեղեկատվական համակարգերի մասնագիտական խորհրդում:

3. Գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման նախագծեր: Այս տեսակի նախագծերի հայտերն առաջին փուլում

ներկայացվում են երեք փորձագետի: Փորձաքննությունն անցկացնում են համապատասխան գիտության ոլորտի մեկ փորձագետ և գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման մրցույթի անցկացման փորձագիտական խորհրդի մեկ անդամ: Երրորդ փորձագիտական եզրակացությունը ներկայացնում է գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման և ՋԼՄ-ներում աշխատանքի փորձ ունեցող փորձագետը: Փորձագիտության երկրորդ փուլում հայտերը քննարկվում են գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման մրցույթի անցկացման փորձագիտական խորհրդում:

IX. Տարբեր տեսակի մրցույթների նախագծերի փորձաքննության երկրորդ փուլի առանձնահատկությունները

Հիմնական մրցույթ, երիտասարդ գիտնականների աջակցության մրցույթ, գիտահանրամատչելի հրապարակումների պատրաստման մրցույթ, մրցույթ ֆիզիկական անձանց համար, նպատակային մրցույթներ, ՌՀԳՀ-Կայսերական ուղղափառ պաղեստինյան կազմակերպություն մրցույթ: Այս մրցույթներին ներկայացված նախագծերի հայտերը փորձաքննություն են անցնում Հիմնադրամի համապատասխան փորձագիտական խորհրդներում՝ ըստ հաստատված կարգի:

Փորձագիտական խորհուրդը Հիմնադրամի խորհրդի բյուրոյին ներկայացնում է նախագծերի փորձաքննության արդյունքները և մշակում առաջարկություններ ընտրված գիտական նախագծերի ֆինանսավորման վերաբերյալ:

Միջազգային մրցույթներ: Համատեղ միջազգային մրցույթներին ներկայացված նախագծերի ռուսաստանյան մասնակիցների հայտերը փորձաքննություն են անցնում ՌՀԳՀ-ի միջազգային և նպատակային մրցույթների փորձագիտական խորհրդում՝ հաստատված կարգի համաձայն: Արտասահմանյան մասնակիցների հայտերը փորձաքննության են ենթարկվում մրցույթի արտասահմանյան համապատասխան մարմինների կողմից: Միջազգային և նպատակային մրցույթների փորձագիտական խորհրդում հայտերը դիտարկվում են՝ հաշվի առնելով արտասահմանյան գործընկերների կողմից

իրականացված փորձաքննության արդյունքները: Փորձագիտական խորհուրդը Հիմնադրամի խորհրդի բյուրոյին է ներկայացնում նախագծերի փորձաքննության արդյունքները և մշակում է առաջարկություններ՝ ընտրված գիտական նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:

Մարզային մրցույթներ: Այս տեսակի մրցույթին ներկայացված նախագծերի հայտերն անցնում են եռափուլ փորձաքննություն: Առաջին փուլով հայտերը քննարկվում են մարզային փորձագիտական խորհրդների կողմից՝ ՌՀԳՀ-ի մարզային մրցույթների պայմաններին համապատասխանելու նպատակով: Երկրորդ փուլով մրցույթին մասնակցելու իրավունք ստացած նախագծերը փորձաքննություն են անցնում ՌՀԳՀ-ի մարզային մրցույթների փորձագիտական խորհրդում՝ համաձայն հաստատված կարգի: Երրորդ փուլով ՌՀԳՀ-ի մարզային մրցույթների փորձագիտական խորհուրդը Հիմնադրամում իրականացված փորձաքննության արդյունքները ներկայացնում է մարզային փորձագիտական խորհրդներին: Վերջիններս իրավասու են մերժել այս կամ այն նախագիծն աջակցելու որոշումը, ինչպես նաև դրանց ֆինանսավորման չափը՝ հիմնավորելով նման որոշումը: Մարզային փորձագիտական խորհուրդները չեն կարող փոխել նախագծերի վերաբերյալ Հիմնադրամի կայացրած բացասական որոշումները: Այս ամենից հետո ՌՀԳՀ-ի մարզային մրցույթների փորձագիտական խորհուրդը Հիմնադրամի խորհրդին և դրա բյուրոյին է ներկայացնում նախագծերի փորձաքննության արդյունքները և ընտրված նախագծերի ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունները:

X. Նախագծերի գիտական հաշվետվությունների փորձաքննությունը

1. Նախագծերի միջանկյալ և վերջնական հաշվետվությունների փորձաքննությունն իրականացվում է համապատասխան փորձագիտական խորհրդում: Փորձաքննության նպատակն է գնահատել նախագծի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալն ու նշանակությունը, ստացված արդյունքների կարևորությունը, միջոցների ծախսման նպատակայնությունը և այլն:

2. Հաշվետվությունների փորձաքննության առաջին փուլն իրականացվում է հետևյալ կերպ:

2.1. Գիտական հետազոտություններ իրականացնելու նախագծերի, գիտական աշխատություններ հրատարակելու նախագծերի, միջառարկայական հետազոտություններ իրականացնելու նախագծերի, առանձին գիտնականների կողմից հետազոտություններ իրականացնելու նախագծերի, արշավների, դաշտային և սոցիոլոգիական հետազոտությունների, գիտավերականգնողական աշխատանքների նախագծերի և գիտական միջացառումների կազմակերպման նախագծերի հաշվետվություններ: Այս խմբին պատկանող նախագծերի հաշվետվություններն առաջին փուլում ուղարկվում են մեկ փորձագետի և համապատասխան փորձագիտական խորհրդի մեկ անդամի: Երկրորդ փուլում հաշվետվությունները փորձագիտական եզրակացությունների հետ միասին քննարկվում են փորձագիտական խորհրդների համապատասխան բաժանմունքներում, իսկ հետո՝ համապատասխան փորձագիտական խորհրդի պլենար նիստի ժամանակ:

2.2. Գիտական նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման ստեղծման նախագծերի հաշվետվություններ: Առաջին փուլում հաշվետվությունն ուղարկվում է երկու փորձագետի. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետ և տեղեկատվական համակարգերի փորձագիտական խորհրդի մեկ անդամ: Երկրորդ փուլում հաշվետվությունները քննարկվում են տեղեկատվական համակարգերի փորձագիտական խորհրդում:

2.3. Գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման նախագծերի հաշվետվություններ: Առաջին փուլում յուրաքանչյուր հաշվետվություն ուղարկվում է երկու փորձագետի. գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման և ԶԼՄ-ներում աշխատելու փորձ ունեցող փորձագետ և գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման մրցույթի անցկացման փորձագիտական խորհրդի մեկ անդամ: Երկրորդ փուլում հաշվետվությունները քննարկվում են

գիտահանրամատչելի աշխատությունների պատրաստման մրցույթի անցկացման փորձագիտական խորհրդում:

3. Նախատեսված աշխատանքների վաղաժամ ավարտի և ծրագրավորված արդյունքների ստացման, կամ հետագա աշխատանքների ակնհայտ անհեռանկարության և նախատեսված արդյունքների ստացման անհնարության, ինչպես նաև նախապես հայտարարված աշխատանքների ոչ պատշաճ իրականացման կամ ֆինանսական միջոցների ոչ նպատակային վատնման դեպքում փորձագետներն իրավասու են առաջարկել Հիմնադրամին դադարեցնել հետագա ֆինանսավորումը: Եթե նախագծի միջանկյալ կամ վերջնական հաշվետվությունը բացասական գնահատականի է արժանացել, ապա դրա ղեկավարը կարող է զրկվել հետագայում որպես նախագծի ղեկավար օժանդակություն ստանալու իրավունքից:

4. Եթե որևէ նախագծի հաշվետվությունը չի ներկայացվում, ապա փորձագիտական խորհուրդները իրավասու են առաջարկել Հիմնադրամի խորհրդին զրկել այդ նախագծի ղեկավարին հինգ տարի շարունակ մասնակցել ՌՀԳՀ-ի մրցույթներին, ինչպես նաև ամբողջությամբ վերադարձնել տրամադրված գումարները:

5. Բաժանմունքների իրականացրած աշխատանքների արդյունքները քննարկվում են համապատասխան փորձագիտական խորհրդի պլենար նիստի ժամանակ: Փորձագիտական խորհուրդը Հիմնադրամի խորհրդին և բյուրոյին ներկայացնում է նախագծերի հաշվետվությունների փորձաքննության արդյունքները և առաջարկություններ է մշակում շարունակվող նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ:

XI. Փորձաքննության արդյունքների ներկայացումը ՌՀԳՀ-ի խորհրդի բյուրոյին և ՌՀԳՀ-ի խորհրդին:

1. Հիմնադրամի խորհուրդը և դրա բյուրոն չեն դիտարկում փորձաքննության բոլոր փուլերը չանցած նախագծերը:

2. Հիմնադրամի խորհրդի բյուրոյի նիստից ոչ ուշ, քան երկու շաբաթ առաջ դրա անդամները ստանում են հայտերի փորձաքննության արդյունքները և ընտրված նախագծերի ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունները:

3. ՌՀԳՀ-ի խորհրդի բյուրոյի նիստին ներկայացվում են հայտերի վարկանիշային ցուցակները՝ նախագծերի փորձաքննության արդյունքների և ընտրված նախագծերի ֆինանսավորման ծավալների վերաբերյալ փորձագիտական խորհրդների առաջարկությունների հետ մեկտեղ:

4. Փորձաքննության հետ կապված ողջ տեղեկատվությունը Հիմնադրամի խորհրդի բյուրոյին ներկայացնում են փորձագիտական խորհրդների նախագահները կամ նրանց տեղակալները: Բյուրոն իրականացնում է հայտերի նախնական գնահատումն ու մրցույթին ներկայացված նախագծերի ընտրությունը, կազմում է օժանդակության համար ընտրված գիտական նախագծերի ցանկը՝ յուրաքանչյուր նախագծի համար նշելով փորձագիտական խորհրդների կողմից առաջարկված ֆինանսավորման ծավալները, և ստացված ամբողջ փաթեթը փոխանցում է Հիմնադրամի խորհրդին՝ վերջնական որոշում կայացնելու համար:

5. Շարունակվող նախագծերի հաշվետվությունների փորձաքննության արդյունքները և հետագա ֆինանսավորման ծավալների վերաբերյալ առաջարկությունները փորձագիտական խորհուրդները փոխանցում են միանգամից Հիմնադրամի խորհրդին՝ հաստատման համար:

6. Նիստից մեկ շաբաթ առաջ Հիմնադրամի խորհրդի անդամները կարող են պահանջել ներկայացնել հիմնավորում, ըստ որի առաջարկվել կամ մերժվել է մրցույթին ներկայացված այս կամ այն նախագիծը:

7. Մրցույթին ներկայացված Հիմնադրամի խորհրդի անդամների հայտերի փորձաքննության արդյունքները դրվում են քվեարկության խորհրդի նիստի ժամանակ: Դրական որոշման համար անհրաժեշտ է ներկա գտնվողների ձայների կեսից ոչ պակասը: Քվեարկության արդյունքների հիման վրա էլ ընդունվում են վերջնական որոշումները:

8. Նախագծերի հաշվետվությունների փորձաքննության և փորձագիտական խորհրդների առաջարկությունների հիման վրա հիմնադրամի խորհուրդը որոշում է կայացնում վերջնական հաշվետվությունները հաստատելու, նախագծերի ֆինանսավորումը շարունակելու կամ դադարեցնելու վերաբերյալ:

9. Հիմնադրամի խորհուրդը հաստատում է գիտական նախագծերի մրցույթի արդյունքները և իրականացվող նախագծերի հաշվետվությունները՝ հիմք ընդունելով Հիմնադրամի խորհրդի բյուրոյի և փորձագիտական խորհրդների կողմից ներկայացված ցուցակները, և որոշում է մրցույթի և փորձաքննության արդյունքում ընտրված գիտական նախագծերի ֆինանսավորման ընդհանուր ծավալները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև փոփոխում է դրանք:

10. Հիմնադրամի խորհրդի բյուրոն, հիմք ընդունելով Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատված գիտական նախագծերի մրցույթի արդյունքները և իրականացվող գիտական նախագծերի հաշվետվությունների փորձաքննությունը, ինչպես նաև հաշվի առնելով ֆինանսավորման հաստատված ծավալները և դրանց հնարավոր փոփոխությունները՝ հաստատում է յուրաքանչյուր նախագծի ֆինանսական ծավալը:

ՌՀԳՀ-ի տեղեկատվական համակարգ

Հաշվի առնելով հայտերի մեծ քանակը, դրանց ներկայացման, մշակման ու փորձաքննության կազմակերպման հետ կապված դժվարությունները՝ ՌՀԳՀ-ի խորհուրդը 2011 թ. որոշում կայացրեց ստեղծել Հիմնադրամի համալիր տեղեկատվական համակարգ, որը գործարկվեց նույն թվականին: [Блинов А.Н., стр. 236]

Տեղեկատվական համակարգի միջոցով հնարավոր է.

- ՌՀԳՀ-ի մրցույթներին հայտերի առցանց ներկայացում և գրանցված հայտերի նախապատրաստում՝ տպելու համար:
- ՌՀԳՀ-ի կողմից աջակցություն ստացած հայտերի հաշվետվությունների առցանց ներկայացում, գրանցված հաշվետվությունների նախապատրաստում՝ տպելու համար:
- ՌՀԳՀ ներկայացված հայտերի և հաշվետվությունների առցանց փորձաքննություն,
- օժանդակություն ստացած նախագծերի ֆինանսական փաստաթղթերի նախապատրաստում,
- ՌՀԳՀ ներկայացվող հայտերի և հաշվետվությունների մասին

տեղեկության հավաքագրում, ավտոմատացված մշակում և պահպանում:

ՌՀԳՀ-ի համագործակցությունը ԳՊԿ-ի հետ

ԳՊԿ-ի հետ ՌՀԳՀ-ը համագործակցում է 2011 թ. փետրվարի 18-ին կնքված համագործակցության համաձայնագրի հիման վրա: Ըստ առաջին հոդվածի, համաձայնագրի հիմնական առարկան Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտական կոլեկտիվների և հետազոտողների միջև համագործակցության զարգացման աջակցությունն է՝ երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ գիտական հետազոտությունների օժանդակության համար: Համաձայն 2-րդ հոդվածի, կողմերի միջև համագործակցությունն իրականացվում է.

ա. համատեղ մրցույթների իրականացմամբ,

բ. գիտնականների խմբերի կողմից նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի համատեղ իրականացմամբ,

գ. համատեղ գիտական միջոցառումների կազմակերպման նախագծերով:

Բացի այդ կողմերը բաց են նաև համագործակցության այլ ձևերի համար:

Ըստ հոդված 4-ի կողմերը օժանդակում են միմյանց գիտական նախագծերի փորձաքննության իրականացման և դրանում առաջատար գիտնականների ներգրավման հարցում:

Նույն օրը ստորագրվել է նաև լրացուցիչ պայմանագիր՝ ԳՊԿ-ի և ՌՀԳՀ-ի միջև կնքված համագործակցության համաձայնագրին կից: Դրանով ամրագրվել է, որ, սկսած 2012 թվականից, երկու տարին մեկ կանցկացվեն համատեղ մրցույթներ հետևյալ գիտական ուղղություններով .

- պատմություն, հնագիտություն, ազգագրություն,
- բանասիրություն,
- փիլիսոփայություն,
- գիտաբանություն,
- արվեստագիտություն,
- հոգեբանություն,
- տնտեսագիտություն,

- սոցիոլոգիա,
- քաղաքագիտություն,
- իրավագիտություն,
- կրթության հիմնարար խնդիրներ,
- մարդու ուսումնասիրության համալիր խնդիրներ,
- բժշկության և մարդու էկոլոգիայի սոցիալական խնդիրներ:

Կողմերն ապահովում են մրցույթների անցկացումը, հայտերի անկախ փորձաքննությունը և հաղթող նախագծերի ֆինանսավորումը՝ յուրաքանչյուրն իր երկրում: Հայկական և ռուսական գիտական խմբերի ղեկավարները նախօրոք համաձայնեցնում են նախատեսվող հետազոտության թեման, մրցույթին ներկայացվող նախագծով նախատեսված պարտականությունների բաշխումը և աշխատանքների պլան-գրաֆիկը: Համաձայնեցված հայտերը ներկայացվում են միաժամանակ. հայկական խմբի ղեկավարը հայտը հանձնում է ԳՊԿ, ռուսական խմբի ղեկավարը՝ ՌՀԳՀ: Չհամաձայնեցված, կամ միակողմանի ներկայացված հայտերը չեն դիտարկվում:

Յուրաքանչյուր գիտնական կարող է հանդիսանալ մրցույթին ներկայացված միայն մեկ գիտական նախագծի ղեկավար: Նախագծի ղեկավար հանդիսացող գիտնականը կարող է միաժամանակ որպես կատարող ընդգրկված լինել միայն մեկ այլ նախագծում:

Յուրաքանչյուր կողմն իրականացնում է հայտերի անկախ փորձաքննություն՝ համաձայն իր կողմից ընդունված ընթացակարգի: Վերջնական որոշումն ընդունվում է փորձաքննությունների արդյունքների համատեղ քննարկումից հետո:

Յուրաքանչյուր նախագծի տևողությունը մեկից - երկու տարի է:

Հայկական կողմից մրցույթին կարող են մասնակցել 2-4 մասնակից: Խմբերում կարող են ընդգրկվել պետական գիտական կազմակերպություններում և պետական բուհերում աշխատող գիտնականներ/դասախոսներ, պետական պատվերով առկա և հեռակա ուսուցման ասպիրանտներ, մագիստրատուրայի ուսանողներ և բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ: Խմբի բոլոր մասնակիցները պետք է լինեն ՀՀ մշտական բնակիչներ և նախագծի իրականացման ժամանակ բնակվեն Հայաստանում:

Նախագծի ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան, առնվազն

հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում առնվազն հինգ հրատարակված հոդված: Նախագծի ղեկավարը պետք է պաշտոնապես ձևակերպված աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերություններում լինի այն կազմակերպության հետ, որտեղ շահելու դեպքում իրականացվելու է նախագիծը: Նախագծի ղեկավար չի կարող գտնվել նախագծի կատարողի վարչական ենթակայության տակ: Յուրաքանչյուր գիտնական մրցույթին կարող է լինել միայն մեկ նախագծի ղեկավար, կամ ներգրավված լինել միայն մեկ նախագծում որպես կատարող: Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող, ասպիրանտ կամ ուսանող:

Ռուսական կողմից խմբին ներկայացվող պահանջները քիչ այլ են: Խմբի մասնակիցները պետք է հանդիսանան մշտապես Ռուսաստանում բնակվող և Ռուսաստանում աշխատող գիտնականներ: Չկա խմբի անդամների թվաքանակի հստակ սահմանափակում: Հայտատուների վրա տարիքային, գիտական կոչումի և աստիճանի, զբաղեցրած պաշտոնի և կազմակերպության գերատեսչական պատկանելիության սահմանափակումներ նույնպես չեն դրվում: Ընդհանրապես, յուրաքանչյուր տարի ՌՀԳՀ-ի դրամաշնորհների 20 տոկոսից ավելին ուղղվում են ոչ պետական գիտական և կրթական կազմակերպություններին: Հիմանդրամը հորդորում է նախագծերում ներգրավել երիտասարդ գիտնականներին, ասպիրանտներին և ուսանողներին: Նախագծերին կարող են մասնակցել նաև օտարերկրյա գիտնականները, սակայն առանց ՌՀԳՀ-ի կողմից ֆինանսավորում ստանալու: Յուրաքանչյուր նախագիծ կարող է ունենալ միայն մեկ ղեկավար: Սույն մրցույթի շրջանակներում գիտնականը կարող է լինել միայն մեկ նախագծի ղեկավար: Ղեկավարը պետք է գրանցված իրավական հարաբերությունների մեջ լինի այն կազմակերպության հետ, որի միջոցով իրականացվելու է նախագծի ֆինանսավորումը:

Ներկայացված նախագծերը չպետք է արդեն իսկ ֆինանսավորվեն բյուջեից: Արգելվում է նաև նույն նախագիծը ներկայացնել ՌՀԳՀ-ի տարբեր մրցույթներին կամ ներկայացնել այնպիսի նախագիծ, որն արդեն մեկ անգամ ֆինանսավորվել է ՌՀԳՀ-ի կողմից: Մրցույթին չեն կարող մասնակցել նաև դրա շրջանակներից դուրս գտնվող հայտերը (գրքերի հրատարակում և այլն), ինչպես նաև ոչ պատշաճ կերպով լրացված կամ

Ժամկետից ուշ ներկայացված հայտերը: Եթե հայտը ներկայացվել է միայն ԳՊԿ կամ ՌՀԳՀ, այն նույնպես դուրս է մնում մրցույթից:

Յուրաքանչյուր կողմն իրականացնում է ստացված հայտերի անկախ փորձաքննությունը: Ռուսական կողմն իրականացնում է մրցույթին ներկայացված նախագծերի փորձաքննությունը համաձայն վերևում ներկայացված կարգի: Հայկական կողմի փորձաքննությունը համանման է հայ-բելառուսական մրցույթների ժամանակ անցկացվող փորձաքննությանը:

Եթե կողմերից մեկը մերժում է որևէ հայտի ֆինանսավորումը, ապա նման որոշում ավտոմատ կերպով անում է նաև մյուս կողմը:

Հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական կապերի ուսումնասիրությունը համատեղ պետական դրամաշնորհների շրջանակներում

Տեղեկագրի սույն հատվածում դիտարկվում է ՀՀ - ՌԴ և ՀՀ - ԲՀ գիտնականների համագործակցությունը ԳՊԿ և ՀՀՌՀ ու ՌՀԳՀ, ԳՊԿ և ՀՀԲՀՀ կողմից անցկացվող համատեղ մրցույթների շրջանակներում: Օգտագործվել են գիտաչափական տվյալներ, որոնք վերցվել են ռուսական RINC, հայկական AINC և Web of Science (WOS) շտեմարաններից: Տվյալ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են հայ-ռուսական չորս և հայ-բելառուսական երկու մրցույթներ:

Օգտագործված տվյալների բազաների վերաբերյալ հակիրճ ակնարկ

Ռուսաստանում գիտաչափության զարգացման տեսանկյունից կարևոր քայլերից էր «Научная электронная библиотека» (Գիտական էլեկտրոնային գրադարան) ընկերության կողմից Ռուսաստանում գիտական հրատարակությունների խոշորագույն էլեկտրոնային գրադարանի՝ eLibrary-ի և RINC-ի (գիտական հղման ռուսական ցուցիչ) մշակումն ու ներդրումը: eLibrary-ին ստեղծվել է 1999թ. ՀՀՌՀ նախաձեռնությամբ: RINC նախագիծը ստեղծվել է 2005թ. գիտական հղումների ազգային ինդեքսի ստեղծման նպատակով: Հարկ է նշել նաև, որ RINC -ը ինտեգրված է eLibrary-ի հետ:

Այժմ RINC -ում ինդեքսավորվում են ավելի քան 4600 ռուսաստանյան գիտական ամսագրեր և մոտավորապես 700 ամսագրեր այլ երկրներից (Հայաստան, Բելառուս, Ուկրաինա, Ղազախստան և այլն): Բոլոր այդ ամսագրերի համար հաշվարկվում են ինչպես ազդեցության գործոնները, այնպես էլ այլ մատենաչափական ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ RINC -ը հնարավորություն է տալիս իրականացնել ռուսաստանցի ավելի քան 600.000 գիտնականների և ռուսաստանյան ավելի քան 11.000 գիտական կազմակերպությունների հետազոտական աշխատանքների և

հրատարակչական ակտիվության հնարավորինս անկողմնակալ գնահատում: Հայաստանում գիտական հղումների ազգային ինդեքսի մշակմամբ զբաղվում է Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնը, որը գործում է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կազմում: Գիտական հղման հայաստանյան ցուցչի (AINC) մշակման և ներդրման աշխատանքները սկսվել են 2010թ. ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախաձեռնությամբ: AINC-ը RINC-ի օրինակով ստեղծված տվյալների բազա է՝ ձևավորված հայկական առաջատար գիտական ամսագրերի մատենաչափական մշակման արդյունքում, որը պարունակում է մատենագիտական տվյալներ: Այսօր AINC-ում ինդեքսավորված է 45 հայկական ամսագիր: Հոդվածների ընդհանուր թիվը 11475 է, արխիվն էլ պարունակում է 2007-2015 թվականների համարները:

Web of Science-ը ունիվերսալ գիտական հղումների ինդեքսն է աշխարհում, որը մշակվում է Thompson Reuters ընկերության կողմից: WOS-ում ներկայացված գիտության ճյուղերի թիվն ավելի քան 250 է: Արխիվը հասնում է մինչև 1898թ.:

Նյութերն ու մեթոդները

Սույն հետազոտությունն իրականացվել է ըստ վեց երկկողմանի համատեղ մրցույթների հայտերի ուսումնասիրության (Աղյուսակ 1), ինչպես նաև RINC, AINC և WOS տվյալների բազաների հիման վրա: Օգտագործվել են այնպիսի մատենաչափական և գիտաչափական ցուցանիշներ, ինչպիսիք են հեղինակի հրապարակումների թիվը, հեղինակի հղումների գումարային թիվը, Հիրշի ինդեքսը, ամսագրերի միջինացված ազդեցության գործոնը, ինքնահղումների թիվը, համահեղինակների կողմից արված հղումների թիվը, ինչպես նաև մեկ միավորին բաժին հասնող հղումների միջին թիվը: Հետազոտությունն իրականացվել է WOS-ի դեպքում 2006-2015 թթ. համար, RINC-ի դեպքում 1991-2015 թթ. համար և AINC-ի դեպքում՝ 2007-2015 թթ.:

Աղյուսակ 1. Հայ-ռուսական և հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների վերաբերյալ քանակական տվյալներ

	Տարի	Ներկայացված հայտեր (դիտարկված)	Ֆինանսավորված
ԳՊԿ - ՀՀՌՀ	2013-2015	127 (121)	17
ԳՊԿ - ՀՀՌՀ	2015-2017	91(89)	25
ԳՊԿ - ՌՀԳՀ	2012-2013	7(7)	4
ԳՊԿ - ՌՀԳՀ	2014-2015	14 (11)	8
ԳՊԿ - ՀՀԲՀՀ	2011-2013	30 (27)	17
ԳՊԿ - ՀՀԲՀՀ	2013-2015	36(34)	17

2012-2015 թվականների ընթացքում հայ-ռուսական երկկողմ համատեղ մրցույթների շրջանակներում ներկայացվել է 239 հայտ, որոնցից տեխնիկական փորձաքննություն անցել են 228-ը: Գիտական փորձաքննության արդյունքում ֆինանսավորվել է 54 նախագիծ: Ինչ վերաբերում է հայ-բելառուսական համատեղ մրցույթներին, ապա 2011-2015 թթ-ին անցկացվել է երկու համատեղ մրցույթ, որին ընդհանուր առմամբ ներկայացվել է 66 հայտ, որոնցից 61-ն անցել է տեխնիկական փորձաքննությունը: Գիտական փորձաքննության արդյունքում ֆինանսավորվել է 34 նախագիծ:

Հետազոտության մասնակիցները պայմանականորեն բաժանվել են երկու խմբի՝ հաղթողներ և չհաղթողներ: Ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 2ա և 2բ:

Աղյուսակ 2ա. Տվյալներ հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների մասնակիցների վերաբերյալ

№	Անվանում	Հայկական կողմից	Ռուսական կողմից	Ընդհանուր թիվը
1	Նախագծերի մասնակիցներ	923	1468	2391
2	Հաղթողներ	206	322	528
3	Չհաղթողներ	717	1146	1863

Աղյուսակ 2բ. Տվյալներ հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների մասնակիցների վերաբերյալ

№	Անվանում	Հայկակա ն կողմից	Բելառուսակ ան կողմից	Ընդհանուր թիվը
1	Նախագծերի մասնակիցներ	217	229	446
2	Հաղթողներ	134	139	273
3	Չհաղթողներ	83	90	173

Սույն հետազոտության մեջ իրականացվել է ֆինանսավորում ստացած մասնակիցների գիտաչափական ցուցանիշների համեմատությունը մնացած մասնակիցների համապատասխան ցուցանիշների հետ: RINC-ի տվյալների շտեմարանից վերցվել են հետևյալ ցուցանիշները.

- Հեղինակի հրապարակումների թիվը RINC-ում
- Հեղինակի հղումների գումարային թիվը
- Հիրշի ինդեքսը
- Ամսագրերի, որոնցում հրապարակվել են հոդվածները, միջինացված ազդեցության գործոնը
- Ինքնահղումների թիվը
- Համահեղինակների կողմից արված ինքնահղումները

WOS-ի տվյալների շտեմարանից վերցվել են հետևյալ ցուցանիշները.

- Հեղինակի հրապարակումների թիվը WOS-ում
- Հեղինակի հղումների գումարային թիվը
- Հեղինակի հղումների գումարային թիվն առանց ինքնահղումների
- Մեկ միավորին բաժին հասնող հղումների միջին թիվը
- Հիրշի ինդեքսը:

ԳՀՀԻ տվյալների շտեմարանից վերցվել են հետևյալ ցուցանիշները.

- ԳՀՀԻ-ում հեղինակի հրապարակումների թիվը:

Արդյունքները և քննարկումները

Ինչպես արդեն նշվել է, հետազոտության հիմքում ընկած է երկկողմ պետական մրցույթների շրջանակներում ՀՀ և ՌԴ, ՀՀ և ԲՀ գիտնականների համագործակցությունը: Սույն հոդվածի համար ուսումնասիրված նախագծերի ընդհանուր թիվը կազմում է 239 հայ-ռուսական, և 66 հայտ հայ-բելառուսական համատեղ երկկողմ մրցույթների համար: Գիտական փորձաքննության արդյունքում հայ-ռուսական մրցույթում աջակցություն են ստացել 54 նախագիծ: Հայտերը բաշխված են ըստ գիտական ուղղությունների, որոնք ներառված են մրցույթների ծրագրի մեջ: (Մանրամասն տե՛ս Աղյուսակ 3ա)

Աղյուսակ 3ա. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների հայտերի ընդհանուր թիվը և ֆինանսավորված հայտերի թիվն ըստ գիտական ուղղությունների

<i>N^o</i>	<i>Անվանումը</i>	<i>Հայտերի թիվը</i>	<i>Ֆինանսավորված հայտերի թիվը</i>
	Ընդհանուր թիվը	239	54
1	Բնական գիտություններ	173	36
1.3	Ֆիզիկա և աստղագիտություն	56	10
1.4	Քիմիա	36	9
1.6	Կենսաբանական գիտություններ	32	8
1.5	Երկրի մասին գիտություններ և շրջական միջավայրի մասին հարակից գիտություններ	23	4

1.1	Մաթեմատիկա	13	2
1.2	Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	12	3
1.7	Այլ բնական գիտություններ	1	0
2	Տեխնիկական գիտություններ	35	4
2.3	Մեխանիկա	11	1
2.9	Կենսատեխնոլոգիա	7	0
2.2	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	4	0
2.4	Մեքենագիտություն և մեքենաշինություն	4	1
2.6	Նյութագիտություն	3	2
2.11	Ինժեներիայի և տեխնոլոգիաների այլ տեսակներ	3	0
2.8	Էկոլոգիա	2	0
2.10	Նանոտեխնոլոգիա	1	0
3	Բժշկական գիտություններ	10	2
3.4	Այլ բժշկական գիտություններ	4	1
3.1	Ընդհանուր բժշկություն	3	0
3.3	Բժշկական կենսատեխնոլոգիա	2	1
3.2	Կլինիկական բժշկություն	1	0
4	Գյուղատնտեսական գիտություններ	0	0
5	Հասարակական գիտություններ	12	7
5.2	Էկոնոմիկա և բիզնես	5	2
5.1	Հոգեբանություն	2	1

5.3	Մանկավարժական գիտություններ	2	2
5.4	Սոցիոլոգիա	2	1
5.6	Քաղաքական գիտություններ	1	1
6	Հայագիտություն և հումանիտար գիտություններ	9	5
6.1	Պատմություն, հնագիտություն	6	4
6.2	Լեզվաբանություն, գրականագիտություն	2	1
6.3	Փիլիսոփայություն, էթիկա	1	0

Գիտական փորձաքննության արդյունքում հայ-բելառուսական մրցույթում աջակցություն են ստացել 34 նախագիծ: Հայտերը բաշխված են ըստ գիտական ուղղությունների, որոնք ներառված են մրցույթների ծրագրի մեջ: (Մանրամասն տե՛ս Աղյուսակ 3բ)

Աղյուսակ 3բ. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների հայտերի ընդհանուր թիվը և ֆինանսավորված հայտերի թիվն ըստ գիտական ուղղությունների:

<i>№</i>	<i>Անվանումը</i>	<i>Հայտերի թիվը</i>	<i>Ֆինանսավորված հայտերի թիվը</i>
	Ընդհանուր թիվը	64	34
1	Բնական գիտություններ	41	24
1.3	Ֆիզիկա և աստղագիտություն	14	8
1.4	Քիմիա	8	4
1.6	Կենսաբանական գիտություններ	14	10
1.5	Երկրի մասին գիտություններ և շրջական միջավայրի մասին հարակից գիտություններ	1	0
1.1	Մաթեմատիկա	1	1

1.2	Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	3	1
1.7	Այլ բնական գիտություններ	0	0
2	Տեխնիկական գիտություններ	12	6
2.3	Մեխանիկա	5	1
2.9	Կենսատեխնոլոգիա	2	2
2.2	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	1	1
2.4	Մեքենագիտություն և մեքենաշինություն	0	0
2.6	Նյութագիտություն	1	1
2.11	Ինժեներիայի և տեխնոլոգիաների այլ տեսակներ	1	0
2.8	Էկոլոգիա	1	0
2.10	Նանոտեխնոլոգիա	1	1
3	Բժշկական գիտություններ	3	1
3.4	Այլ բժշկական գիտություններ	1	1
3.1	Ընդհանուր բժշկություն	1	0
3.3	Բժշկական կենսատեխնոլոգիա	0	0
3.2	Կլինիկական բժշկություն	1	0
4	Գյուղատնտեսական գիտություններ	0	0
5	Հասարակական գիտություններ	7	3
5.2	Էկոնոմիկա և բիզնես	3	2
5.1	Հոգեբանություն	0	0
5.3	Մանկավարժական	0	0

	գիտություններ		
5.4	Սոցիոլոգիա	2	1
5.5	Իրավունք	1	0
5.7	Սոցիալ տնտեսական աշխարհագրություն	1	0
6	Հայագիտություն և հումանիտար գիտություններ	1	0
6.1	Պատմություն, հնագիտություն	0	0
6.2	Լեզվաբանություն, գրականագիտություն	0	0
6.6	Այլ հումանիտար գիտություններ	1	0

Վերը նշված տվյալները փաստում են, որ թե՛ հայտերի ընդհանուր թվով, թե՛ ֆինանսավորում ստացած հայտերի թվով առաջատար են բնական գիտությունները. ֆիզիկա և աստղագիտություն, քիմիա և կենսաբանական գիտություններ, իսկ հասարակագիտական և հատկապես հումանիտար գիտություններն ավելի համեստ դիրքում են: Ընդ որում պետք է նշել, որ հասարակագիտական և հումանիտար գիտություններում քիչ են ոչ միայն հաղթողները, այլև ընդհանրապես մրցույթին մասնակցողները: Մի շարք կիրառական գիտություններում հայտերի քիչ քանակը կամ դրանց բացակայությունը բացատրվում է նրանով, որ ՀՀՌՀ-ն և ՀՀԲՀՀ-ն ֆինանսավորում են միայն հիմնարար հետազոտություններ:

Հայ-բելառուսական և հայ-ռուսական երկկողմ համատեղ մրցույթների մասնակիցների ընդհանուր թիվը կազմում է 2391 հայ-ռուսական և 446 հայ-բելառուսականի դեպքում (մանրամասն տե՛ս Աղյուսակ 2ա և 2բ):

Հաղթած և չհաղթած մասնակիցների միջին տարիքն ուսումնասիրված բոլոր մրցույթներում մոտավորապես նույնն է (Մանրամասն տե՛ս Աղյուսակ 4ա և 4բ):

Աղյուսակ 4ա. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների մասնակիցների միջին տարիքը

Մասնակիցներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հայ գիտնականներ	44	47
Ռուս գիտնականներ	45	45

Աղյուսակ 4բ. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների մասնակիցների միջին տարիքը

Մասնակիցներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հայ գիտնականներ	49	50
Բելառուս գիտնականներ	55	53.5

Ինչ վերաբերում է հայ-ռուսական համատեղ պետական մրցույթների մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերակցությանը, ապա պետք է նշել, որ երկու դեպքում էլ թվով առաջին տեղում են գտնվում գիտության թեկնածուները, որոնց հետևում են գիտության դոկտորները և առանց գիտական աստիճանի գիտական աշխատողները: Մասնակիցների շարքում ամենափոքր թիվը կազմում են ասպիրանտներն ու ուսանողները (տե՛ս Նկար 1):

Ուսանողների և ասպիրանտների առկայությունը գիտական խմբերում հանդիսանում է կամ ամրագրված պայման (հայկական կողմից), կամ՝ ենթադրվող (ռուսական կողմից):


Նկար 1. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթներում հաղթած (ա, բ) և չհաղթած (գ, դ) հայ և ռուս մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերությունը



ա)



բ)




գ)



դ)

Պատկերը նույնն է նաև հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթներում հաղթած հայ և բելառուս մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերակցության դեպքում (մանրամասն տե՛ս Նկար 2):

Նկար 2. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթներում հաղթած (ա, բ) և չհաղթած (գ, դ) հայ և բելառուս մասնակիցների գիտական աստիճանների տոկոսային հարաբերությունը



Այսպիսով, կարելի է արձանագրել, որ գիտական աստիճանների տոկոսային հարաբերակցությունը շատ չի տարբերվում հաղթող և չհաղթող մասնակիցների մոտ: Միաժամանակ պետք է արձանագրել, որ գիտության դոկտորների, թեկնածուների և գիտական աշխատողների՝ աշխարհում լայնորեն տարածված 1:10:15 հարաբերակցությունը (որով առաջնորդվում էին նաև Խորհրդային Միությունում), մեծապես խախտված է նշված դիագրամներում:

Հայ-ռուսական և հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթներում հաղթած և չհաղթած մասնակիցների գիտաչափական տվյալների վերլուծություն

Հաշվի առնելով այն փաստը, որ տարեցտարի գիտաչափական ցուցանիշներն ավելի մեծ դեր են խաղում գիտական նախագծերի ֆինանսավորման հարցում, ստորև մենք կներկայացնենք հայ-ռուսական և հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների հաղթած և չհաղթած մասնակիցների գիտաչափական որոշ տվյալների վերլուծությունը: Յուրաքանչյուր կողմի համար անցկացվել է առանձին վերլուծություն, որը ներառել է ինչպես մրցույթներում հաղթած, այնպես էլ չհաղթած մասնակիցներին:

Որպես հիմք ծառայել են հրապարակումների և հղումների թիվը, Հիրշի ինդեքսը, ամսագրերի ազդեցության գործոնները և այլն: Տեղեկությունները վերցվել են WOS, RINC, AINC շտեմարաններից:

ա) Հայ-ռուսական համատեղ պետական մրցույթների մասնակիցների գիտաչափական տվյալների վերլուծություն

Նկար 3-ում, 4-ում և աղյուսակ 5-ում պատկերված տվյալները, հնարավորություն են տալիս անել որոշակի ենթադրություններ:


Առաջին. տվյալները ցույց են տալիս, որ մրցույթների արդյունքները հիմնականում համընկնում են RINC-ից վերցված գիտաչափական ցուցիչների հետ: Հայ մասնակիցների պարագայում առկա է 100 տոկոսանոց համընկնում, իսկ ռուս մասնակիցների պարագայում միայն չհաղթած մասնակիցների հրապարակումների թիվն է չնչին ավել հաղթողների նույնանման թվից:

Հայաստանյան մասնակիցների հրապարակումների թիվը RINC -ում և WOS-ում փաստում են, որ մրցույթների հայ մասնակիցները նախընտրում են WOS-ում ինդեքսավորվող ամսագրերը (5836 հոդված WOS-ում, 2727 հոդված RINC -ում): ԳՀՀԻ-ի հետ համեմատական չի անցկացվում, քանի որ տվյալները դեռևս լիարժեք չեն:


Ինչ վերաբերում է ռուսաստանյան մասնակիցներին, ապա նրանք

նախընտրում են ռուսական ամսագրերը: Համաձայն ստացված տվյալների, RINC-ում նրանց հրապարակումների թիվը վեց անգամ գերազանցում է WOS-ում հրապարակումների թվին:

Նկար 3. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների հայ (ա) և ռուս (բ) մասնակիցների գիտաչափական ցուցանիշների միջին արժեքները վերցված RINC շտեմարանից (հաղթողներ և չհաղթողներ)




ա)




բ)

Նկար 4. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների հայ (ա) և ռուս (բ) մասնակիցների գիտաչափական ցուցանիշների միջին արժեքները վերցված WOS շտեմարանից (հաղթողներ և Չհաղթողներ)



ա)



բ)

Նկար 3-ում ներկայացված մրցույթների հաղթողների գիտաչափական ցուցանիշներն արտացոլում են մրցույթների հաղթողների առավելությունը մնացած մասնակիցների նկատմամբ: Այդ օրինաչափությունը նկատելիորեն խախտված է նկար 4-ում, որտեղ ներկայացված են տվյալներ WOS-ից: Հայ և ռուս չհաղթած մասնակիցներն ավելի շատ հրապարակումներ ունեն WOS-ում, քան հաղթողները: Ռուս չհաղթած մասնակիցների գիտաչափական բոլոր ցուցանիշների միջինն ավելի բարձր է, քան հաղթողներինը (Նկար 4բ): Իսկ հայ չհաղթած մասնակիցների մոտ առաջին 3 գիտաչափական ցուցանիշներն ավելի բարձր են, քան հաղթողների մոտ (Նկար 4ա): Ընդ որում, վերջին երկու գիտաչափական ցուցանիշների տատանումները չնչին են:

Վերը նշվածից կարելի է ենթադրություն անել, որ երկու կողմերից էլ չհաղթած մասնակիցները նախապատվությունը տալիս են WOS-ում ինդեքսավորվող ամսագրերին:


Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մրցույթներում հաղթած մասնակիցներն բազմակի անգամ քիչ հոդվածներ ունեն AINC-ում ինդեքսավորվող ամսագրերում, քան մնացած մասնակիցները: Այս փաստը կարող է բացատրվել նրանով, որ նախ, հայաստանյան ոչ բոլոր ամսագրերն են ինդեքսավորված AINC-ում, նաև՝ հայաստանյան ամսագրերը գիտաչափական ցուցանիշներով զիջում են RINC-ում և WOS-ում ինդեքսավորվող ամսագրերին:

Աղյուսակ 5. Հայ-ռուսական պետական համատեղ մրցույթների հայ և ռուս մասնակիցների հրապարակումները AINC-ում


Մասնակիցներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հրատարակությունների թիվ	111	1139
Մեկ մասնակցի հաշվով հրատարակությունների միջին թիվը	0.2	0.6

բ) Հայ-բելառուսական համատեղ պետական մրցույթների մասնակիցների գիտաչափական վերլուծություն

Նկար 5. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների հայ (ա) և բելառուս (բ) մասնակիցների գիտաչափական ցուցանիշների միջին արժեքները վերցված RINC շտեմարանից (հաղթողներ և չհաղթողներ)




ա)




բ)

Նկար 6. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների հայ (ա) և բելառուս (բ) մասնակիցների գիտաչափական ցուցանիշների միջին արժեքները վերցված WOS շտեմարանից (հաղթողներ և Չհաղթողներ)



ա)



բ)

Աղյուսակ 6. Հայ-բելառուսական պետական համատեղ մրցույթների հայ և բելառուս մասնակիցների հրապարակումները AINC-ում

Մասնակիցներ	Հաղթողներ	Չհաղթողներ
Հրատարակությունների թիվ	286	47
Մեկ մասնակցի հաշվով հրատարակությունների միջին թիվը	0.95	3.7

Վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ հայ-բելառուսական մրցույթների արդյունքներն ամբողջությամբ համընկնում են RINC-ից, WOS-ից և AINC-ից վերցված գիտաչափական տվյալների հետ: Եվ ընդհանուր, և ըստ մասնակից երկրների կատարած հետազոտության պարզ է, որ հաղթող մասնակիցների գիտաչափական տվյալներն ավելի բարձր են, քան չհաղթողներինը:

Փաստորեն, ի տարբերություն հայ-ռուսական մրցույթների, որտեղ հատկապես ռուս չհաղթած մասնակիցների գիտաչափական տվյալներն ավելի բարձր էին հաղթողներից, հայ-բելառուսական մրցույթների դեպքում գիտաչափական տվյալները համընկնում են մրցույթների արդյունքների հետ:

Համատեղ հրապարակումները որպես գիտական համագործակցության արդյունք

Գիտական համագործակցությունը հիմնական արդյունքներից մեկը համատեղ հրապարակումներն են: Ընդ որում, հարկ է առանձնահատուկ նշել, որ համատեղ հայ-ռուսական և հայ-բելառուսական մրցույթները խթան հանդիսացան հայ և ռուս, հայ և բելառուս գիտնականների միջև նոր գիտական կապերի հաստատման համար: Հետազոտությունները վկայում են, որ մրցույթների շրջանակներում գիտական նոր կապերի թիվը գերազանցում է մինչ այդ գոյություն ունեցող գիտական կապերի թվին: Սա ևս մեկ ապացույց է, որ համատեղ մրցույթները նպաստում են երկկողմ գիտական կապերի քանակական և որակական աճին:


Հայ-ռուսական համատեղ հրապարակումները առկա են դեռևս անկախության առաջին օրերից: Սկսած 2012թ-ից այդ գործընթացը ծավալվում է նաև համատեղ մրցույթների շրջանակներում: Սկսած 2009 թ-ից մրցույթներում հաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակությունների թիվն աճում է՝ հասնելով իր բարձրագույն կետին 2014-2015 թթ. (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Հայ-ռուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած և չհաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակումների քանակը WOS, RINC, AINC շտեմարաններում:


Հայ-ռուսական մրցույթներ						
	<i>հաղթողներ</i>			<i>չհաղթողներ</i>		
Տարի	RINC	WOS	AINC	RINC	WOS	AINC
2012	7	14	0	26	25	5
2013	10	11	0	13	15	0
2014	22	8	0	13	22	0
2015	14	31	0	8	29	1
2016	1	1	0	1	2	0

Հարկ է առանձնահատուկ մատնանշել մի հետաքրքիր փաստ, որ մրցույթներում չհաղթած մասնակիցները նույնպես շարունակել են համագործակցությունը, ինչն արտահայտվում է նաև համատեղ հոդվածների հրապարակմամբ: Ընդ որում, այդ խմբի համար WOS-ում համատեղ հրապարակությունների բարձրագույն կետը բաժին է ընկել 2015 թ., իսկ RINC -ում՝ 2012 թվականին (մանրամասն տե՛ս Նկար 7ա,բ):

Նկար 7ա. Հայ-ռուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակություններն ըստ տարիների (տվյալները վերցված են WOS-ից, RINC-ից և AINC-ից):





Նկար 7բ. Հայ-ռուսական համատեղ պետական մրցույթներում չհաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակություններն ըստ տարիների (տվյալները վերցված են WOS-ից, RINC-ից և AINC-ից):



Հաջորդ նկարը (Նկար 8) հնարավորություն է ընձեռում ըստ տարիների ներկայացնել այն ամսագրերի ազդեցության գործոնները, որոնցում տեղ են գտել հայ և ռուս գիտնականների և հետազոտողների համատեղ հրապարակումները: Բարձրագույն կետը գրանցվել է 2007 թ., իսկ ամենացածր ցուցանիշները եղել են 2008 և 2014 թթ.: Ինչ վերաբերում է 2012 թ. հետո տվյալներին (հայ-ռուսական համատեղ մրցույթների մեկնարկ), ապա այստեղ առայժմ նկատվում է մարող տատանման տենդենց: Ամսագրերի միջինացված ազդեցության գործոնների միջին ցուցանիշը կազմում է մոտ 1.9:

Նկար 8. Ամսագրերի միջին ԱԳ, որտեղ տպագրվել են հայ-ռուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած (ա) և չհաղթած (բ) հայ և ռուս մասնակիցների համատեղ հոդվածները:



Մույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև այն ամսագրերը, որտեղ հրապարակվել են հայ-ռուսական և հայ-բելառուսական մրցույթների մասնակիցների համատեղ հոդվածները: Ինչպես հաղթած, այնպես էլ չհաղթած խմբերի մոտ ամենացածր տոկոսը բաժին է հասնում հայաստանյան գիտական ամսագրերին (32 հոդված), որին հաջորդում են ռուսական ամսագրերը (187), իսկ առաջատար են միջազգային պարբերականները (292):

Աղյուսակ 7-ում հստակ երևում են համատեղ հոդվածների հեղինակ հայ և ռուս գիտնականների և հետազոտողների նախընտրությունները՝ հրապարակության ամսագրերն ընտրելու հարցում: Ամենացածր տոկոսը բաժին է հասնում հայաստանյան ամսագրերին: Դրանց հաջորդում են ռուսաստանյան ամսագրերը, իսկ առաջատար են միջազգային պարբերականները: Այս պատկերն ունի օբյեկտիվ պատճառներ: Նախ, ինչպես նշվեց AINC-ը դեռևս չի ներառում բոլոր հայաստանյան ամսագրերը, բացի այդ, վերջիններս գիտաչափական տվյալներով զիջում են միջազգային ամսագրերին: Իր հերթին ռուսաստանյան և միջազգային ամսագրերի հարաբերակցությունը ևս բացատրվում է քանակական ցուցանիշների տարբերությամբ: Բացի այդ, հարկ է նաև հաշվի առնել այն փաստը, որ հեղինակները շատ հաճախ գերադասում են հրապարակվել WOS-ում ինդեքսավորվող ամսագրերում:


Աղյուսակ 7. Հայ-ռուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած և չհաղթած հայ և ռուս հետազոտողների համատեղ հրապարակումների քանակը WOS, RINC, AINC շտեմարաններում:

Հայ- ռուսական մրցույթներ						
	<i>հաղթողներ</i>			<i>չհաղթողներ</i>		
Տարի	RINC	WOS	AINC	RINC	WOS	AINC
2012	7	14	0	26	25	5
2013	10	11	0	13	15	0
2014	22	8	0	13	22	0
2015	14	31	0	8	29	1
2016	1	1	0	1	2	0

Նման պատկեր է նկատվում նաև WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի պարագայում (Նկար 9):


Նկար 9. WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի տոկոսային բաշխումն ըստ երկրների, որտեղ հրատարակվել են հայ-ուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած (ա) և չհաղթած (բ) մասնակիցների համատեղ հոդվածները:

Հաղթողներ



ա)

Չհաղթողներ



բ)

Երկու խմբերում էլ նախընտրությունը տրված է WOS-ում ինդեքսավորվող միջազգային ամսագրերին, որոնց հաջորդում են WOS-ում ինդեքսավորվող ռուսաստանյան ամսագրերը: Երրորդ տեղում են գտնվում WOS-ում ինդեքսավորվող հայաստանյան ամսագրերը:

Հարկ է նշել, որ միայն 4 հայաստանյան ամսագիր է ինդեքսավորվում WOS-ում, որոնց ազդեցության գործոնները տատանվում են 0.287-0.707 տիրույթում: WOS-ում ինդեքսավորվող ռուսաստանյան ամսագրերի թիվը կազմում է 162, որոնց ազդեցության գործոնները գտնվում են 0.004-2.964 տիրույթում:


Հաղթողների խմբում 8-րդ նկարում նշված ամսագրերի շուրջ 38 տոկոսն ունեն 1-ից բարձր ազդեցության գործոն (ամենաբարձր ազդեցության գործոն ունի ֆիզիկայի ոլորտի ամսագիրը՝ 6.22), իսկ շուրջ 62 տոկոսն ունեն 1-ից ցածր ազդեցության գործոն:

Հարկ է նշել, որ մնացած մասնակիցների պարագայում միջազգային ամսագրերի բաժինը աճում է՝ հասնելով 87 տոկոսի: Չհաղթած մասնակիցների խմբում ամսագրերի 65 տոկոսն ունեն 1-ից բարձր ազդեցության գործոն, իսկ 35 տոկոսը՝ 1-ից ցածր: Այս խմբում ամենաբարձր ազդեցության գործոնը նույնպես ֆիզիկայի ոլորտի ամսագրին է՝ 7.51:


Այսպիսով, կարելի է փաստել, որ համատեղ հայ-ռուսական մրցույթները նպաստում են նաև միջազգային ամսագրերում հայ և ռուս գիտնականների և հետազոտողների հրապարակումների թվի աճին:

Ի տարբերություն հայ-ռուսական համատեղ հրապարակումների, հայ-բելառուսական համատեղ հրապարակումների թիվն անհամեմատ փոքր է: Ակնհայտ է, որ համատեղ հայ-բելառուսական մրցույթները խթանել են հայ և բելառուս գիտնականների միջև նոր գիտական կապերի հաստատումը և համատեղ հրապարակումների թվի աճին (Նկար 10 ա,բ):

Նկար 10 ա. Հայ-բելառուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած հայ և բելառուս հետազոտողների համատեղ հրապարակություններն ըստ տարիների (տվյալները վերցված են WOS-ից, RINC-ից և AINC-ից):





Նկար 10բ. Հայ-բելառուսական համատեղ պետական մրցույթներում չհաղթած հայ և բելառուս հետազոտողների համատեղ հրապարակություններն ըստ տարիների (տվյալները վերցված են WOS-ից, RINC-ից և AINC-ից):



Հաջորդ նկարը (Նկար 11) հնարավորություն է ընձեռում ըստ տարիների ներկայացնել այն ամսագրերի ազդեցության գործոնները, որտեղ տպագրվել են հայ-բելառուսական համատեղ հրապարակումները:

Նկար 11. Ամսագրերի միջին ԱԳ, որտեղ տպագրվել են հայ-բելառուսական համատեղ պետական մրցություններում հաղթած և չհաղթած հայ (ա) և բելառուս (բ) մասնակիցների համատեղ հոդվածները:



Աղյուսակ 8-ում հստակ երևում են համատեղ հոդվածների հեղինակ հայ և բելառուս գիտնականների և հետազոտողների նախընտրությունները՝ հրապարակության ամսագրերն ընտրելու հարցում: Ամենացածր տոկոսը կրկին բաժին է ընկել հայաստանյան ամսագրերին: Սակայն հայ-բելառուսական համատեղ հրապարակումների դեպքում առաջատար են ռուսաստանյան ամսագրերը, որոնց նախորդում են միջազգային պարբերականները:


Աղյուսակ 8. Հայ-բելառուսական համատեղ պետական մրցույթներում հաղթած և չհաղթած հայ և բելառուս հետազոտողների համատեղ հրապարակումների քանակը WOS, RINC, AINC շտեմարաններում:

Հայ-բելառուսական մրցույթներ						
	հաղթողներ			չհաղթողներ		
Տարի	RINC	WOS	AINC	RINC	WOS	AINC
2012	1	1	3	1	0	0
2013	6	3	1	3	0	0
2014	4	6	0	1	1	0
2015	2	3	0	1	1	0


WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի հարցում հայ-բելառուսական համատեղ մրցույթների պատկերը հետևյալն է. ակնհայտ տարբերություններ կան հաղթած և չհաղթած խմբերի միջև (Նկար 13): Չհաղթած խմբերի բոլոր համատեղ հոդվածները WOS-ում ինդեքսավորված հայկական և բելառուսական ամսագրերում են: Նշենք, որ WOS-ում ինդեքսավորված է բելառուսական 3 ամսագիր, որոնց ազդեցության գործոնները գտնվում են 0,400-0,930 տիրույթում: Այս խմբում բոլոր ամսագրերն ունեն 1-ից ցածր ազդեցության գործոն: Ինչ վերաբերում է հաղթողների խմբերին, ապա համատեղ հոդվածների շուրջ 70%-ը տպագրված է միջազգային ամսագրերում, որին հաջորդում են բելառուսական, ապա՝ հայկական ամսագրերը: Հաղթողների խմբի ամսագրերի 60 %-ն ունի 1-ից բարձր ազդեցության գործոն, իսկ ամենաբարձր ազդեցության գործոնը կենսաքիմիայի ոլորտի ամսագրին է՝ 4,015:

Նկար 13. WOS-ում ինդեքսավորվող ամսագրերի տոկոսային բաշխումն ըստ երկրների, որտեղ հրատարակվել են մրցույթներում հաղթած (ա) և չհաղթած (բ) հայ և բելառուս մասնակիցների համատեղ հոդվածները:

Հաղթողներ



Չհաղթողներ



Վերջաբան

Հայ-ռուսական և հայ-բելառուսական գիտական կապերը Խորհրդային Միության փլուզումից հետո սկսեցին զարգանալ առավելապես անհատական մակարդակում: Սակայն ժամանակի ընթացքում գործընթացն ավելի ինստիտուցիոնալ բնույթ ստացավ, որին մեծապես նպաստեցին նաև երկկողմ համատեղ մրցույթները, որոնք անցկացվում են ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի, Ռուսաստանի կառավարությանն առընթեր Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրերի հիման վրա:

Վերոնշյալ համաձայնագրերի հիման վրա իրականացված հայ-ռուսական և հայ-բելառուսական համատեղ մրցույթների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տվյալ մրցույթները նպաստում են.

- Հայ և ռուս, հայ և բելառուս գիտնականների միջև գոյություն ունեցող գիտական կապերի պահպանմանը,
- Նոր կապերի հաստատմանը,
- Հայ և ռուս, հայ և բելառուս գիտնականների համատեղ գիտական հրապարակումների թվի աճին, ընդ որում, հիմնականում WOS-ում ինդեքսավորվող ամսագրերում:

Հարկ է նշել, որ հաղթած և չհաղթած խմբերի միջին տարիքը, գիտության դոկտորների և թեկնածուների, ինչպես նաև առանց գիտական աստիճանի գիտաշխատողների, ասպիրանտների և ուսանողների տոկոսային հարաբերակցությունը հիմնականում համընկնում է ինչպես հայկական, այնպես էլ ռուսական և բելառուսական կողմերի համար:

Ինչ վերաբերում է մրցույթների գիտական փորձաքննության արդյունքների գիտաչափական գնահատականին, ապա հայ-ռուսական համատեղ մրցույթներում հաղթած խմբերի գիտաչափական ցուցանիշները ոչ միշտ են բարձր չհաղթած մասնակիցների նույնանման ցուցանիշներից: Իսկ հայ-բելառուսական մրցույթներում հաղթած խմբերի գիտաչափական ցուցանիշներն ամբողջությամբ համընկնում են մրցույթների արդյունքների հետ:

Միաժամանակ հարկ է նշել, որ գիտաչափական տվյալները կազմում են հայտի վերջնական գնահատականի 20-25%, իսկ հիմնական գնահատականը դրվում է փորձագետների կողմից՝ հայտի գիտական գնահատման արդյունքում:

Օգտագործված գրականություն

1. Bornmann L., Mutz R. Growth rates of modern science: A bibliometric analysis based on the number of publications and cited references // Journal of the Association for Information Science and Technology. 2015. V.66, N2: 2215–2222.
2. Coccia M. A scientometric model for the assessment of scientific research performance within public institutes // Scientometrics. 2005. V.65, N3: pp. 307-321.
3. Gzoyan E., Hovhannisyan L., Aleksanyan S., Ghazaryan N., Hunanyan S., Bourghida A., Sargsyan Sh. Comparative analysis of the Scientific Output of Armenia, Azerbaijan and Georgia // Scientometrics. January 2015. Vol. 102, issue 1: pp. 195-212.
4. Smith D.R. Impact factors, scientometrics and the history of citation-based research // Scientometrics. 2012. V.92, N2: 419-427.
5. Арефьев П. Г., Глухов В. А., Еременко Г. О. Российский индекс научного цитирования – инструмент для анализа науки // Библиосфера. 2012. № 5. С. 66 – 71.
6. Блинов А.Н., Российский гуманитарный научный фонд и социогуманитарные исследования в современной России. Вестник МГИМО Университета, 2012, № 1, стр. 231 – 236
7. Գզոյան Է., Մայիլյան Ա., Ստեփանյան Լ., Մկրտչյան Ս., Այվազյան Ն., Հումանիտար և հասարակական գիտությունները հետխորհրդային տարածքում // 21-րդ դար: 2011: Թ. 3. էջ 61-79.
8. Սարգսյան Շ., Ղազարյան Ն., Իսկանդարյան Է., Շարամբեյան Ս.,

Այվազյան Ն., Հայաստանի գիտության վիճակագրական վերլուծության համակարգի մշակումն ըստ հղման հայաստանյան ցուցչի տվյալների: Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնի տեղեկագիր, №1, Եր. 2010:

Նյութեր համացանցից

1. <http://dokipedia.ru/document/5163763>
2. <http://fond.bas-net.by/normbase.html>
3. <http://fond.bas-net.by/struktura.html>
4. <http://grant.rfh.ru/aboutsys>
5. https://kias.rfbr.ru/help/Anonymous/index.html?8_help_system.htm
6. <http://www.rfbr.ru/rffi/getimage?objectId=14267> հասցեով
7. <http://www.rfbr.ru/rffi/ru/international>
8. <http://www.rfbr.ru/rffi/ru/projectexp>
9. http://www.rfbr.ru/rffi/ru/classifieds/o_907316
10. http://www.rfbr.ru/rffi/ru/contest/o_1914216
11. <http://www.rfh.ru/downloads/1023.pdf>
12. <http://www.rfh.ru/index.php/en/obyavleniya/novosti/272-rgnf-obnovil-sostav-ekspertov>
13. <http://www.rfh.ru/index.php/en/dokumenty/arkhiv-dokumentov/401-porjadok-provedeniya-jekspertizy-nauchnyh-proektov-v-rossijskom-gumanitarnom-nauchnom-fonde>

14. <http://www.parliament.am/library/erkoxm/1999-2001/60.pdf>
15. http://scs.am/files/hamadzaynagir_rgnf_18.02.2011.pdf
16. http://scs.am/files/paymanagir_lrac_rgnf_18.02.2011.pdf
17. http://scs.am/files/hamadzaynagir-belarus_gitkom_19.03.2010.pdf
18. http://scs.am/files/hraver-mrcuyt_belarus_2013.doc
19. <http://scs.am/files/hraver-gpk-hhrh-2015-4d5ebdd138d21c3e1ee0adbe31ace614.doc>